Յերկրորդ։ Պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների վոչ մի կարևոր վճիռ չի ընդունվում առանց կուսակցության դեկտարիար ցուցումների։ Այս միանգամայն ճիշտ ե։ Բայց արդյո՞ք այս նշանակում ե, վոր պրոլետարիատի դիկտատուրան սպառվում է կուսակցության դեկտարիատի ցուցումներով։ Արդյո՞ք այս նշանակում ե, վոր կուսակցության դեկտարիար ցուցումները, այդ սպառմանում, կարելի յէ նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ։ Իհարկե, չի նշանակում։ Պրոլետարիատի դիկտատուրան համար չի ապացուցել, կուսակցության դեկտարիար ցուցումներից, բարկացած ե կուսակցության դեկտարիար ցուցումներով։ Լիբրառումը պրոլետարիատի մասպահուս այդ ցուցումների կուսակցությունների կողմից, պլյուս նրանց սայական կազմակերպությունների կողմից։ Այստեղ կինսագործումը կյանքում՝ բնակչության կողմից։ Այստեղ մենք գործ ունենք, ինչպես տեսնում եք, մի ամբողջ շարք անցումների ու միջակա աստիճանների հետ, վորոնք կաղամում են պրոլետարիատի դիկտատուրայի ամենելին վոչ-անցում են պրոլետարիատի դիկտատուրայի ամենելին վոչ-անցումները։ Կուսակցության դեկտարիար ցուցումների կարեւոր մոմենտը։ Կուսակցության դեկտարիար ցուցումների և դրանք կյանքում կենսագործելու միջև ընկած են, հետեւ վարար, դեկտարիար կամքն ու դրույթությունները, այդպիսի ցուղասակարդի կամքն ու դրույթությունները, այդպիսի ցուղասակարդի կամքությունները (կամ ցուղմերը պաշտպանելու նրա պատրաստակամությունը), այդպիսի ցուղումները կիրառելու նրա հըմցանկանալը),

¹ Բնդգծումն իմն ե։ Ի. Ստ.։

տությունը (կամ անհմտությունը), նրա հմտությունը (կամ անհմտությունը)՝ կիրառելու դրանք հենց այնպես, ինչպես երադրությունն եւ պահանջում այդ։ Հաղիվ թե հարկ կա ասպացուցելու, վոր զեկավարությունն իր վրա վերցրած կուսակցությունը չի կարող հաշվի չառնել զեկավարվողների կամքը, կացությունը, գիտակցության մակարդակը, չի կարող հաշվից դուրս գցել իր դասակարգի կամքը, կացությունն ու գիտակցության մակարդակը։ Ուստի, ով կուսակցության զեկավար դերը նույնացնում եւ արողետարիատի դիկտատուրայի հետ, նա դասակարգի կամքն ու գործողությունները նենդափոխում եւ կուսակցության ցուցումներով։

Յերբորդ։ «Պրոլետարիատի դիկտատուրան, — ասում են էնինը, — հաղթած և քաղաքական իշխանությունն իր ձեռքը վերցրած պրոլետարիատի դասակարգային կոփին ե» (տե՛ս հ. Հ. XXIV, եջ 311)։ Ինչո՞վ կարող եւ արտահայտվել դասակարգային այդ կոփիը։ Նա կարող եւ արտահայտվել պրոլետարիատի մի շարք զինված յելույթներով ընդդեմ տապալված բուրժուազիայի արտելքների (ՎԱԼԱԶՔ) կամ ոտարերկրյա բուրժուազիայի ինտերվենցիայի։ Նա կարող եւ արտահայտվել քաղաքացիական պատերազմով, յեթե պրոլետարիատի իշխանությունը դեռ ամրացած չե։ Նա կարող եւ արտահայտվել պրոլետարիատի լայն կազմակերպչական ու շինարարական աշխատանքով, դործի մեջ ներդրավելով լայն մասսաներին, յերբ իշխանությունն արդեն ամրացած է։ Բոլոր այս դեպքերում գործող անձը պրոլետարիատն ե, վորպես դասակարգ։ Չի պատահել, վոր կուսակցությունը, միմիայն կուսակցությունը, կազմակերպի բոլոր այդ յելույթները բացառապես իր սեփական ուժերով, առանց դասակարգի աջակցության։ Սովորաբար նա միայն դեկալարում ե այդ յելույթները և զեկավարում ե այն չափով, ինչ չափով իր կողմում ունի դասակարգի աջակցությունը։ Վորովհետեւ կուսակցությունը չի կարող ծածկել (ՊՈՐԵՏԵ), չի կարող փոխարինել դասակարգին։ Վորովհետեւ կուսակցությունը, չնայած իր ամբողջ կարևոր, զեկավար դերին, այնուամենայնիվ, մնում է վորպես դասակարգի մասը։ Ուստի նա, ով կուսակցության

դեկալար դերը նույնացնում ե պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա դասակարգը նենդափոխում ե կուսակցությամբ։

Չորրորդ։ Կուսակցությունն իրականացնում ե պրոլետարիատի դիկտատուրան։ «Կուսակցությունը—դա պրոլետարիատի անմիջականորեն կառավարող ավանդարդն ե, դա զեկավարն ե» (Էնին)։ Այս խմասով եւ կուսակցությունը վերցնում իշխանությունը, կուսակցությունը կառավարում յերկիրը։ Բայց այդ դեռ չի նշանակում, թե կուսակցությունն իրականացնում ե պրոլետարիատի դիկտատուրան՝ պետական իշխանությունը զանց առնելով, առանց պետական իշխանության, թե կուսակցությունը կառավարում ե յերկիրը՝ խորհուրդները գանց առնելով, վոչ խորհուրդների միջոցով։ Այդ դեռ չի նշանակում, թե կուսակցությունը կարելի յեւ նույնացնել խորհուրդների հետ, պետական իշխանության հետ։ Կուսակցությունն իշխանության միջուկն ե։ Բայց նա պետական իշխանություն չի և չի կարող նույնացնել պետական իշխանության հետ։ «Վորովհետեւ կառավարող կուսակցական «վերնախամիկերի» հետ չի աճուրել խորհրդային «վերնախամայիկերը», նրանք մեղ մոտ միաձուլված են և այդպես ել կլիմեն» (տե՛ս հ. Հ. XXVII, եջ 208)։ Այս միանդամայն ճիշտ ե։ Բայց սրանով լենինը ընալ չի ուզում ասել, թե մեր խորհրդային հաստատություններն ամբողջությամբ առած, որինակ՝ մեր բանակը, մեր տրանսպորտը, մեր տնտեսական հիմնարկները և այլն՝ մեր կուսակցության հիմնարկներն են, թե կուսակցությունը կարելի յեւ նույնացնել պետական իշխանության հետ։ Լենինը բազմիցս ասել ե, վոր «խորհուրդների սիստեմը—պրոլետարիատի դիկտատուրան ե», վոր «խորհրդային իշխանությունը—պրոլետարիատի դիկտատուրան ե» (տե՛ս հ. Հ. XXIV, եջ 14 և 15), բայց նա յերբեք չի ասել, թե կուսակցությունը պետական իշխանություն ե, թե խորհուրդները և կուսակցությունը միևնույնն են։ Կուսակցությունը, վոր ունի միքանի հա-

բյուր հաղար անդամ, զեկավարում է միքանի միլիոն կուսական ու անկուսակցական մարդ ընդդրկող խորհություններին ու նրանց ճյուղավորություններին կենտրոնում ու տեղբուռք, բայց նա ինքը չի կարող և չպետք է փոխարինի նրանց: Աչա թե ինչու կենինն ասում ե, վոր «դիկտատուրան խորհուրդներում կազմակերպված պրոլետարիատն ե իրականացնում», վորին զեկավարում է բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը», — վոր «կուսակցության ամբողջ աշխատանքը խորհուրդների միջոցով և անցնում, վորոնք միավորում են աշխատավոր մասսաներին՝ առանց պրոֆեսիաների խտրության» (տե՛ս հ. Հ. ԽԽՎ, եջ 193, 194), վոր դիկտատուրան «հարկ և լինում իրականացնելու... խորհրդային ապարատի միջոցով¹» (տե՛ս հ. Հ. ԽԽՎ, եջ 64): Ուստի, ով կուսակցության զեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա խորհուրդները, պետական իշխանությունը նենդափոխում է կուսակցությամբ:

Հիմգերորդ: Պրոլետարիատի դիկտատուրայի հասկացողությունը պետական հասկացողություն է: Պրոլետարիատի դիկտատուրան պարտավորակես ներառում է բոնության հասկացողությունը: Առանց բոնության դիկտատուրա չի լինում, յեթե դիկտատուրան հասկանանք այդ բառի ճշգրիտ իմաստով: Լենինը պրոլետարիատի դիկտատուրան բնորոշում է վորպես «անմիջականորեն բոնության վրա հենվող իշխանություն» (տե՛ս հ. ԽԽ, եջ 315): Ուստի խոսել կուսակցության դիկտատուրայի մասին պրոլետարների դասակարգի նկատմամբ և այդ դիկտատուրան նույնացնել պրոլետարիատի դիկտատուրայի հետ՝ նշանակում է խոսել այն մասին, վոր կուսակցությունն իր դասակարգի նկատմամբ պետք է լինի վո՞չ միայն զեկավար, վո՞չ միայն առաջնորդ ու ուսուցիչ, այլև մի տեսակ պետական իշխանություն, վորը բոնություն է կիրառում նրա նկատմամբ: Այդ պատճառով, ով «կուսակցության դիկտատուրան» նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա լոելյան յելնում է այն

¹ Բնդգծումն իմն ե: Ի. Ստ.:

բանից, վոր կուսակցության հեղինակությունը կարելի յեկառուցել բոնության վրա, — մի բան, վոր աբսուրդ և ի վորը միանդամայն անհամառեղելի յեկնինիզմի հետ: Կուսակցության հեղինակությունը պահպանվում է բանվոր դասակարգի վաստակությամբ: Իսկ բանվոր դասակարգի վըստահությունը ձեռք է բներվում վոչ բոնությամբ, — բռնությունը միայն սպանում և այն, — այլ կուսակցության ճիշտ թերիայով, կուսակցության ճիշտ քաղաքականությամբ, կուսակցության նմիրվածությամբ բանվոր դասակարգին, նրա կապով բանվոր դասակարգի մասսաների հետ, նրա պատրաստակամությամբ, նրա հմտությամբ՝ համզելու մասսաներին, վոր իր լողունդները ճիշտ են:

Իսկ այս ամենից ի՞նչ է հետեւում:

Իսկ սրանից հետեւում այն, վոր

1) կուսակցության դիկտատուրա բառը լենինը գործ է ածում վո՞չ թե այդ բառի ճշգրիտ իմաստով («բռնության վրա հենվող իշխանություն»), այլ փոխարերական իմաստով, զեկավարության իմաստով.

2) ով կուսակցության զեկավարությունը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա խեղաթյուրում է լենինին, սխալ կերպով կուսակցությանը վերադրելով բոնության ֆունկցիաներ ամբողջ բանվոր դասակարգի նկատմամբ.

3) ով կուսակցությանը վերադրում և նրան վոչ-հատուկ բոնության ֆունկցիաներ բանվոր դասակարգի նկատմամբ, նա խախտում է ավանդարդի ու դասակարգի, կուսակցության ու պրոլետարիատի ճիշտ փոխարերությունների տարրական պահանջները:

Այսպիսով, մենք ընդհանուր մոտեցանք կուսակցության ու դասակարգի, բանվոր դասակարգի մեջ յեղած կուսակցականների ու անկուսակցականների փոխարարերությունների հարցին:

Լենինն այդ փոխարարերությունները բնորոշում ե վորպես «փոխվաստահություն¹ բանվոր դասակարգի ավան-

¹ Բնդգծումն իմն ե: Ի. Ստ.:

բարդի ու բանվորական մասսայի միջև» (տե՛ս Հ. XXVI, էջ 235):

Ի՞նչ են նշանակում այս :

Այս նշանակում են, նախ՝ վոր կուսակցությունը պետք է զգայուն կերպով ռանկնդրի մասսաների ձայնին, վոր նա պետք է ուշադիր վերաբերլի մասսաների հեղափոխական բնադրին, վոր նա պետք է ուսումնասիրի մասսաների պայքարի պրակտիկան, դրանով ստուգելով իր քաղաքականության ճշտությունը, վոր նա պետք են, հետեւաբար, վո՞չ միայն սովորեցնի, այլև սովորի մասսաներից:

Յերկրորդ՝ այս նշանակում են, վոր կուսակցությունը պետք է որըստորե նվաճի պրոլետարական մասսաների վրաստահությունը, վոր նա պետք են իր քաղաքականությամբ և իր աշխատանքով կոմիտի վրա համար մասսաների աջակցությունը, վոր նա պետք են վո՞չ չեն հրամայի, այլ համոզի նախ և առաջ, մասսաների համար հաշտացնելով կուսակցության քաղաքականության ճշտությունը սեփական վորձանական ճանաչելը, վոր նա պետք են, հետեւաբար, լինի իր դասակարդի ղեկավարը, առաջնորդը, ուսուցիչը:

Այս պայմանների խախտումը նշանակում են այլանդարդի ու դասակարդի ճիշտ փոխհարաբերությունների խախտում, «փոխստահության» խարխլում, թե՛ դասակարդայն, թե՛ կուսակցական կարդապահության խորտակում:

«Անշուշտ, —ասում են լենինը, —զեթե ամեն վոք այժմ արգեն տեսնում են, վոր բոլցեկներն իշխանության գլուխ մնալ չեյին կարսդ վո՞չ թե 2½ տարի, այլ նույնիսկ 2½ տարի, յեթե չեներ մեր կուսակցության մեջ հաստատված խատակույն, խսկակեն յերկաթե կարգապահությունը, յեթե չի բնի բանվոր դասակարգի ամբողջ մասսայի ամենալիականը ու ամենվեր աշակցությունը նրան և, այսինքն աջակցությունն այն ամենի, ինչ վոր բանվոր դասակարդի մեջ խորհու, անիվլ, անձնապհ, ազգեցիկ են, ինչ վոր ընդունակ են իր հետեւից տանելու կամ հրապուրելու հետամնաց խովերին» (տե՛ս Հ. XXV, էջ 173):

«Պրոլետարիատի ղեկասառության, —ասում են այնուհետև լենինը, —համար պայքար են, արյունու ու անարյուն, բնի ու խաղաղ, սազմական ու տնտեսական, մանկական պրաֆեսական ու աղմինիստրատորական, պայքար հին հասարակության ուժերի ու արագիցիաների դեմ: Միլիոնավորների ու տասնյակ-միլիոնավորների սովորության ուժն ամենուսոսկալ ուժն է: Առանց պայքարում կոմիտի և յերկաթե կուս-

1 Բնդզումն իմն ե: Ի. Ստ.:

սակցության, առանց այնպիսի կուսակցության, վորը վայելելիք լին այն ամենի վտանգությունը, ինչ ազմի և տվյալ դասակարգում 1, առանց այնպիսի կուսակցության, վորը կարող է հետեւ մասսայի տրամադրությունը և ազգել նրա վրա, —հաջողությամբ մղել այլպիսի պայքարին անհարին ե» (տե՛ս Հ. XXV, էջ 191):

Բայց կուսակցությունն ի՞նչպես են ձեռք բերում դասակարգի այդ վստահությունն ու աջակցությունը: Ի՞նչպես են կարգավորում պրոլետարիատի դիկտուրայի համար անձրաժեշտ յերկաթե կարգապահությունը, ի՞նչ հողի վրա յեն աճում:

Ահա թե ինչ ե ասում վրա մասին լենինը.

«Ի՞նչո՞վ ե պահպանվում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության կարգապահությունը, ինչո՞վ ե նա ստուգվում, ինչո՞վ ե ամբապընդում: Նախ և առաջ՝ պրոլետարական ավանդարդի դիմակալմանթթյամբ և նրա նվազվածությամբ հեղափոխությանը, նրա տոկումությամբ, անձնապահությամբ, չերոսությամբ: Յերկրորդ՝ աշխատավորների ամենալայն մասսայի 1, առաջին հերթին պրոլետարական, քայլաքական ստրատեգիայի ու տակտիկայի ճշտությամբ, պայմանվ, վոր ամենալայն մասսաները սեփական պարզեցնու, ճանականական վրա վարակությամբ: Յերրորդ՝ այդ ավանդարդի կողմից իրագործվող քաղաքական ղեկավարության ճշտությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի ու տակտիկայի ճշտությամբ, պայմանվ, վոր ամենալայն մասսաները սեփական վրան փառանը համոզվեն այդ ճշտությամբ: Առանց այս պայմանների՝ անիրազործելի յերկավագահությունը հեղափոխական մի կուսակցության մեջ, վորն իսկապես ընդունակ է առաջարկո դասակարգի կուսակցության լինելու, —դասակարդի, վորը պետք է տապալի բուրժուատիվ կամ ամուսնությունը հասարակությունը: Առանց այս պայմանների՝ կարգապահություն ստեղծելու վորմերն անիսուսակելիութեան մասին կարգապահության ստանդարտ պատարկ բան, Քրատ, կուրատուք: Իսկ այս պայմաններին մյուս կարող մեկնեածակել են միայն ել, մյուս կողմից, չեն կարող մեկնեածակել: Նրանք մշակվում են միայն յերկարամեած աշխատանքով, ժանել վորմուլ: Նրանց մշակումը հեշտանում է հեղափոխական ճիշտ թերթիայով միայն, վորը, իր հերթին, դուքտա և հեղափոխական դիմումում և խսկակեն մասսայական ու այլպես հեղափոխական չարժման պրակտիկայի հետ սերտորեն կամ պակցվելով միայն» (տե՛ս Հ. XXV, էջ 174):

Յելլ ասպարագությունը.

«Կապիտալիզմին հաղթելու հաջողության համար պահանջվում է ճիշտ գրաբերակցություն ղեկավար, կոմունիստական կուսակցության, հեղափոխական դասակարդ՝ պրոլետարիատի և մասսայի, այսինքն՝ աշխատավորների ու շահագործվուների ամբողջ գումարի միջև: Միայն կոմունիստական կուսակցությունը իմն ե: Այս կամ հանդիսանում

1 Բնդզումն իմն ե: Ի. Ստ.:

և հեղակոխական դասակարգի ավանդաբարը, յեթե նա ներառում է այդ դասակարգի բոլոր լավագույն ներկայացուցիչներին, յեթե նա բաղկացած և միանգամայն գիտակից ու նվիրված կոմունիստներից, վորոնք լուսավորված և կոփած են հեղափոխական համառ պայքարի վորձով, յեթ այդ կուսակցությունը կարողացել է իրեն անխղելիորեն կապել իր դասակարգի ամբողջ կյանքի հետ, և այդ դասակարգի միջոցով ել շահագործողների ամբողջ մասսայի հետ, և այդ դասակարգին ու այդ մասսային լիակատար վստահության ներշնչել 1.—միայն այդպիսի կուսակցությունն է ընդունակ զեկավարելու պրոլետարիատին ամենաանողք, վճռական, վերջն պայքարում ընդգետ կապիտալիզմի բոլոր ուժերի: Մյուս կողմից, միայն այդպիսի կուսակցության ղեկավարությամբ և պրոլետարիատն ընդունակ ծավալելու իր հեղափոխական դրույթով զեղությունը՝ վոճչի վերածնելով կապիտալիզմի փչացրած բանվորական արևտոկրատիայի վոչ մեծ փոքրամասնության, հին տրեկյանինիստական ու կոռպերատիվ առաջնորդների և այլոց անխուսափելի ապատիան ու մասսայի դիմադրությունը, —ընդունակ ծավալելու իր ամբողջ ուժը, վորոն անօահճանորեն ավելի յե, քան նրա բաժինը բնակչության մեջ՝ կապիտալիստական հասարակության բուն իսկ անտեսական կառուցվածքի չնորհիվ» (տե՛ս 4. XXV, էջ 315):

Այս ցիտատներից հետևում է, վոր

1) Կուսակցության հեղինակությունն ու պրոլետարիատի դիկտատուրայի համար անհրաժեշտ յերկաթե կարգապահությունը բանվոր դասակարգի մեջ կառուցվում են վո՞չ թե ահի կամ կուսակցության «անսահմանակակ» իրավունքների վրա, այլ բանվոր դասակարգի կողմից դեպի կուսակցությունը տածած վատահության վրա, բանվոր դասակարգի կողմից կուսակցությանը ցույց տրվող աջակցության վրա.

2) բանվոր դասակարգի վատահությունը դեպի կուսակցությունը մեկնեն չի ձեռք բերվում և վոչ ել բանվոր դասակարգի նկատմամբ բոնություն գործ դնելու միջոցով, այլ կուսակցության յերկարատև աշխատանքով մասսաների մեջ, կուսակցության ճիշտ քաղաքականությամբ, կուսակցության չնորհքով՝ մասսաներին նրանց սեփական փորձով իր քաղաքականության ճշտությանը համոզելու, կուսակցության չնորհքով՝ իր համար բանվոր դասակարգի աջակցությունն ապահովելու, իր հետևից բանվոր դասակարգի մասսաներին տառնելու.

1 Ընդգծումն իմն է: Ի. Ստ.:

3) առանց կուսակցության ճիշտ քաղաքականության, վոր պետք ե ամրապնդված լինի մասսաների պայքարի փորձով, և առանց բանվոր դասակարգի վատահության՝ կուսակցության իսկական զեկավարություն չի լինում և չի կարող լինել.

4) կուսակցությունն ու նրա զեկավարությունը, յեթե կուսակցությունը վայելում ե դասակարգի վատահությունը և յեթե այդ զեկավարությունն իսկական զեկավարությունն է հանդիսանում, չեն կարող հակադրվել պրոլետարիատի դիկտատուրային, վորովհետեւ առանց բանվոր դասակարգի վատահությունը վայելող կուսակցության զեկավարության (կուսակցության «դիկտատուրայի») անհնարին և պրոլետարիատի փոքրիշատե հաստատուն դիկտատուրա:

Կուսակցության հեղինակությունը և յերկաթե կարգապահությունն առանց այս պայմանների կամ դատարկ Փրազ և, կամ սնապարծությունն ու ավանդյուրա:

Պրոլետարիատի դիկտատուրան չի կարելի հակադրել կուսակցության զեկավարությանը («դիկտատուրային»): Զի կարելի, վորովհետեւ կուսակցության զեկավարությունը գլխավորն ե պրոլետարիատի դիկտատուրայի մեջ, յեթե նկատի ունենանք փոքրիշատե հաստատուն ու լիակատար դիկտատուրա, և վոչ թե այնպիսին եր, որին ակ, Փարիզի կոմունան, վորը լիակատար ու հաստատուն դիկտատուրա չեր ներկայացնուած: Զի կարելի, վորովհետեւ պրոլետարիատի դիկտատուրան ու կուսակցության զեկավարությունն առնվում են, այսպես ասած՝ աշխատանքի վարությունը գտնվում են, այսպես ասած՝ աշխատանքի միևնույն ոճի վրա, գործում են միևնույն ուղղությամբ:

«Հենց հարցի գրումը միայն,—ասում ե լենինը,—գկուսակցության գիկտատուրա, քե՞ն դասակարգի դիկտատուրա, առաջնորդների դիկտատուրա (կուսակցություն), քե՞ն մասսաների դիկտատուրա (կուսակցություն)՝ վկայում ե մաքի ամենաաներևակայելի և անելանելի շփոթության մասին... Բալրին հայտնի յե, վոր մասսաները բաժանվում են գասակարգերի... վոր դասակարգերին սովորաբար և մեծ մասամբ զեկավարում են՝ գնե ժամանակակից քաղաքակիրթ յերկներում՝ քաղաքական կուսակցությունները, վոր քաղաքական կուսակցություններին, վորպես ընդհանուր կանոն, կառավարում են առաջնորդ կոչվող ամենից ավելի հեղինակավոր, ազդեցիկ, փորձված, ամենապատասխանառու պաշտօնների համար ընտրվող անձերի փոքրիշատե կայուն խմբերը...»

Բանը հասցնել... ը ն դ ի ա ն ք ա պ ե ս մասսաների գիկտատուրան առաջնորդների գիկտատուրային հակադրելուն—այդ ծիծաղաւրժ անհեթեթյուն և հիմարություն ե» (տե՛ս Հ. XXV, էջ 188 և 189):

Այս միանդամայն ճիշտ ե: Բայց այս ճիշտ դրույթը յելնում ե այն նախադրյալից, վոր առկա յեն ճիշտ փոխհարաբերություններ ավանդարդի ու բանվորական մասսաների միջև, կուսակցության ու դասակարգի միջև: Նա յելնում ե այն յենթադրությունից, վոր փոխհարաբերություններն ավանդարդի ու դասակարգի միջև մնում են, այսպես ասած՝ նորմալ, մնում են «փոխականության» սահմաներում:

Լավ, բայց ի՞նչպես վարվենք, յեթե ճիշտ փոխհարաբերություններն ավանդարդի ու դասակարգի միջև, յեթե «փոխականության» հարաբերությունները կուսակցության ու դասակարգի միջև մնում են: Ի՞նչպես վարվենք, յեթե կուսակցությունն ինքն սկսում ե այս կամ այն կերպ իրեն հակադրել դասակարգին, խախտելով դասակարգի հետ ունեցած ճիշտ փոխհարաբերությունների հիմունքները, խախտելով «փոխականության» հիմունքները: Հնարավոր են արդյոք առհասարակ այդպիսի դեպքեր: Այսո՛: Հնարավոր են: Դրանք հնարավոր են,

1) յեթե կուսակցությունն սկսում ե մասսաների մեջ հեղինակությունը կառուցել վո՛չ թե իր աշխատանքի և մասսաների վաստակության վրա, այլ իր «անսահմանակալ» իրավունքների վրա.

2) յեթե կուսակցության քաղաքականությունն ակընհայտորեն ճիշտ չե, իսկ նա չի ցանկանում վերանայել և ուղղել իր սխալը.

3) յեթե քաղաքականությունն ընդհանուր առմամբ ճիշտ ե, բայց մասսաները դեռևս սպառաստ չեն յուրացնելու այն, իսկ կուսակցությունը չի ցանկանում կամ չի կարողանում սպասել, վորպեսզի մասսաներին հնարավորություն տա սեփական վորձով համոզվելու կուսակցության քաղաքականության ճշտությանը:

Մեր կուսակցության պատմությունը տալիս ե այդպիսի դեպքերի մի ամբողջ շաբթ: Տարբեր խմբավորումներն

ու Փրակցիաները մեր կուսակցության մեջ ընկնում և ցրիվ ելին դալիս այն պատճառով, վոր նրանք խախտում ելին այդ յերեք պայմաններից վորեւե մեկը, իսկ յերբեմն ել բոլոր այդ պայմանները՝ միասին առած:

Բայց սրանից հետեւում ե, վոր պրոլետարիատի գիկտատուրայի հականությունը կուսակցության «գիկտատուրային» (գեկավարությանը) ճիշտ չի կարող ճանաչվել լոկ այն դեպքում,

1) յեթե բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության գիկտատուրա ասելով հասկանանք վո՛չ թե գիկտատուրա այս բառի բուն իմաստով («բոնության վրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության գեկավարություն, վորը բացառում ե բանությունն ամբողջ դասակարգի վերաբերմամբ, նրա մեծամասնության վերաբերմամբ, ինչու վոր հենց կենին ել հասկանում ե այդ:

2) յեթե կուսակցությունն ունի դասակարգի իսկական գեկավարը լինելու տվյալներ, այսինքն՝ յեթե կուսակցության քաղաքականությունը ճիշտ ե, յեթե այդ քաղաքականությունը ճիշտ պատճեն համապատասխանում ե դասակարգի շահերին.

3) յեթե դասակարգի մեծամասնությունն ընդունում ե այդ քաղաքականությունը, յուրացնում ե այն, կուսակցության աշխատանքի չնորհիվ համոզվում ե այդ քաղաքականության ճշտությանը, վստահում ե կուսակցությանը և աջակցում ե նրան:

Այս պայմանների խախտումն անխուսափելիորեն առաջ ե բերում կոնֆլիկտ կուսակցության ու դասակարգի միջև, պատակառում նրանց միջև, նրանց հակադրումը միմյանց:

Կարելի՞ յե արդյոք կուսակցության գեկավարությունն ուժով վախթաթել դասակարգի վզին: Վո՛չ, չի կարելի: Համենայն դեպք՝ այդպիսի գեկավարությունը չի կարող փոքրիչատե տեսական լինել: Կուսակցությունը, յեթե նա կտմենում ե մնալ սլրության իստիքի կուսակցություն, պետք ե խմանա, վոր ինքն ամենից առաջ և գլխավորապես բանվոր դասակարգի դեկալարն ե, առաջնորդը, ուսուցիչը: Մենք չենք կարող մոռանալ կենինի այն խոսքերը, վոր նա ասել

Ե սրա մասին «Պետություն և հեղափոխություն» բրոշյուրում։

«Քանվորական կուսակցություն դաստիարակելով՝ մարքսիզմը գաստիարակում ե պրոետարիատի այլանդարդը, վորն ընդունակ ե վերջնելու էշխանությունը և ամբողջ ժողովուրդը տանելու դեսի սոցիալիզմ, ուղղություն տալու և կազմակերպելու նոր հասարակակարդը, լինելու բոլոր աշխատավորների ու շահագործվողների ուսուցիչը, դեկալարը, առաջնորդը՝ իր հասարակական կյանքն առանց բուրժուազիայի և բուրժուազիայի դեմ կառուցելու գործում» (տե՛ս Հ. XXI, եջ 386)։

Կարելի՞ յե արդյոք ընդունել, վոր կուսակցությունը դաստիարակի իսկական ղեկավարն ե, յեթե նրա քաղաքականությունը սխալ ե, յեթե նրա քաղաքականությունն ընդհարվում ե դաստիարակի շահերի հետ։ Իհարկե, չի կարելի։ Այդպիսի դեպքերում կուսակցությունը, յեթե նա ցանկանում է մնալ ղեկավար, պետք ե վերանայի իր քաղաքականությունը, պետք ե ուղղի իր քաղաքականությունը, պետք ե ընդունի իր սխալը և ուղղի այն։ Այս դրույթի հաստատման համար կարելի յեր վկայակոչել թեկուղ այնպիսի մի փաստ մեր կուսակցության պատմությունից, ինչպես պարբեճանառման վերացման ժամանակաշրջանն ե, յերբ քանվորական ու գյուղացիական մասսաներն ակնհայտորեն դժգոհ յեղան մեր քաղաքականությունից, և յերբ կուսակցությունը դիմեց, բացահայտ ու աղնվի կերպով դիմեց, այդ քաղաքականության մերանայմանը։ Ահա թե այն ժամանակ ինչ եր առում կենքնը Հ համագումարում՝ պարենմասնատրումը վերացնելու և նոր տնտեսական քաղաքականություն մտցնելու հարցի առթիվ։

«Մենք չպետք ե ջանանք վորեւ բան թագյնել, այլ պետք ե առնեք սուզակի, վոր գյուղացիությունը գդուն ե մեր և իր միջև հաօտատված հարաբերությունների ձևից, վոր նա փոխարարելությունների այդ ձևը չի ուզում և այսուհետև այդպես գոյություն չի ունենալու։ Այս անվիճելի յե, նրա այս կամքն արտահայտվել ե վորոշակի։ Դա աշխատավոր քահակության հսկայական մասսաների կամքն ե։ Մենք այդ պետք ե հաշվի առնենք, և մենք բավականաշափ դրաստ քաղաքագետներ ենք, վորապես ուղղակի առնենք, յեկեք վերանայի նոր տնտեսական քաղաքականությունը գյուղացիության վերաբերմար»¹ (տե՛ս Հ. XXVI, եջ 238)։

¹ Բնդգծումն իմն ե։ Ի. Շտ.։

Կարելի՞ յե արդյոք ընդունել, վոր մասսաների վճռողական յելույթների կազմակերպման նախաձեռնությունն ու ղեկավարությունը կուսակցությունն իր վրա պետք ե վերցնի սոսկ այն հիման վրա, վոր նրա քաղաքականությունն ընդհանուր առմամբ ճիշտ ե, յեթե այդ քաղաքականությունը դեռևս դասակարգի վտահությունն ու աջակցությունը չէ վայելում, ասենք թե՝ վերջնիս քաղաքական հետամնացության պատճառով, յեթե կուսակցությանը դեռևս չի հաջողվել համոզելու դասակարդին, վոր իր քաղաքականությունը ճիշտ է, ասետք մասսաներին, վոր իրենց սեփական փորձով համոզվեն այդ քաղաքականության ճշտությանը։

«Յեթե հեղափոխական կուսակցությունը, —ասում ե լենինը, —մեծամասնություն չունի հեղափոխական դասակարգերի առաջավոր ջոկատներում և յերկում, ապա խոսք չի կարող լինել ապստամբության մասին» (տե՛ս Հ. XXI, եջ 282)։

«Այսանց բանվոր դասակարգի մեծամասնության հայցքների փոփոխության՝ հեղափոխությունն անհնարին ե, իսկ այդ փոփոխությանն ստեղծվում է մասսաների քաղաքական փորձով» (տե՛ս Հ. XXV, եջ 223)։

«Գրուեատարական ավանդաբուրգը գաղափարակես նվաճված ե։ Այս գլխավորն ե։ Առանց դրան չի կարելի անել նույնիսկ առաջին քայլը գտնիքություն։ Բայց դրանից մինչև հաղթությունը գեռում բական հեռու յե։ Միայն ավանդաբուրգով հաղթել չի լինի։ Վճական մարտի նետել միմիկայն ավանդաբուրգը, յերբ զեռ ամբողջ դասակարգը, լոյն մասսաները չեն գրավել ավանդաբուրին կամ ուղղակի աջակցելու, կամ գոնեն, նրա նկատմամբ բարյացակամ չեղուություն պահպանելու դիրքը և նրա հակառակորդին աջակցելու լիակատար անընդունակության դիրքը՝ զի՞չ միայն հիմարություն կիներ, այլև հանցագործություն։ Իսկ վորպեսպի իսկապես ամբողջ դասակարգը, վորպեսպի կազիտալի կողմից ճնշվածների ու աշխատավորների իսկապես լայն մասսաները համեն այլպիսի գիրքի, դրա համար միայն պրոպագանդան, միայն ագիտացիան քիչ ե։ Դրա համար հարկադրության գական քաղաքական փորձը» (տե՛ս նույն տեղը, եջ 229)։

Հայտնի յե, վոր մեր կուսակցությունը հենց այլպես

Ել Վարվում եր Լենինի ասլրիլյան թեղյաններից մինչև 1917 թվի հոկտեմբերյան ապստամբությունը հանող ժամանակաշրջանի ընթացքում։ Յեզ հենց այն պատճառով, որ նա դործում եր Լենինի այդ ցուցումներով, նա ապրուտամբությունը շահեց։

Սրանք են հիմնականում ավանդարդի ու դասակարգի ճիշտ փոխարարերությունների պայմանները։

Ի՞նչ են նշանակում գեկավարել, յեթե կուսակցության քաղաքականությունը ճիշտ է, իսկ ճիշտ հարաբերություններն ավանդարդի ու դասակարգի միջև չեն խախտվում։

Կեկավարել այդպիսի պայմաններում—նշանակում ե կարողանալ համոզել մասսաներին կուսակցության քաղաքականության ճշտությանը, առաջադրել ու անցկացնել այնպիսի լողունդներ, վորոնք մասսաներին մոտեցնում են կուսակցության դիրքերին և նրանց համար հեշտացնում են կուսակցության քաղաքականության ճշտությունը իրենց մեփական փորձով ճանաչելը, նշանակում ե մասսաներին բարձրացնել մինչև կուսակցության դիտակցության մակարդակը և, այդպիսով, ապահովել մասսաների աջակցությունը, նրանց պատրաստակամությունը վճռական պայմարի համար։

Այս պատճառով համոզելու մեթոդը կուսակցության կողմից դասակարգին դեկավարելու հիմնական մեթոդն է։

Յեթե մենք,—ասում ե Լենինը,—այս պահին նուսաստանում, յերկու և կես տարի նուսաստանի ու Անտանտի բոլորուազիայի դեմ տարած չտեսնված հաղթություններից հետո, արհմիությունների մեջ ընդունվելու համար պայման դնելինք դդիկտատուրայի ճանաչումը», մենք հիմունքուն արած կինելինք, կիշացնելինք մասսաների վրա ունեցած մեր ազգեցությունը, կողմելինք մենչելիներին։ Վորովյնու կոժուհների ամբողջ խորին ե՝ կարողանալ համոզել հետամիացներին։ Կարողանալ աշխատել նրանց քրջանում և վոչ թե նրանցից պատվարիել (ոտքառյավածք) հնարովի յերեխայական—ձախ» լոգունդներով» (տե՛ս «Հ. XXV, եջ 198)։

Այս չի նշանակում, իհարկե, թե կոռսակցությունը պետք է համոզի բոլոր բանլորներին, մինչև վերջին մարդը, թե միայն դրանից հետո կարելի յե դիմել դործողությունների, թե միայն դրանից հետո կարելի յե դործողու-

թյուններ ակտել։ Ամենակին։ Այդ նշանակում ե լոկ այն, մոր նախաքան վճռողական քաղաքական գործողությունների դեմքը կուսակցությունը յերկարատև հեղափոխական աշխատանքի միջոցով պետք է ապահովի իրեն համար բանվորական մասսաների մեծամասնության աջակցությունը, դոնե դասակարգի մեծամասնության բարենպաստ չեղոքությունը։ Հակառակ դեպքում լենինյան դրույթն այն մասին, վորքանվոր դասակարգի մեծամասնությունը կուսակցության կողմը նվաճելը հաղթական հեղափոխության անհրաժեշտ պայմանն ե, —որկիած կլիներ վորքե իմաստից։

Լավ, բայց ի՞նչպես վարվենք վորքամասնության հետ, յեթե նա չի կամենում, յեթե նա համաձայն չե հոժարակամ յենթարկվելու մեծամասնության կամքին։ Կարող ե արդյոք կուսակցությունը, պետք է արդյոք կուսակցությունը, իր կողմն ունենալով մեծամասնության վտահությունը՝ հարկադրի վորքամասնությանը, վորք սա յենթարկվի մեծամասնության կամքին։ Այո՛, կարող ե և պետք վի հարկադրի։ Դեկավարությունն ապահովվում ե մասսաներին համոզելու մեթոդով, վորպես մասսաների վրա կուսակցության ներգործելու հիմնական մեթոդ։ Բայց այս մո՛չ թե բացառում, այլ յենթարկում ե հարկադրանքը, յեթե այդ հարկադրանքի բաղան բանվոր դասակարգի մեծամասնության վտահությունն ու աջակցությունն ե կուսակցության նկատմամբ, յեթե դա դործողը պետք է փոքրացնելության նկատմամբ այն բանից հետո, յերբ կարողամասնությանը համոզել։ Արժեր վերհիշել մեր յել են մեծամասնությանը համոզել։ Արժեր վերհիշել մեր կուսակցության մեջ այդ առթիվ յեղած վեճերը, վորոնք կուսակցության արհմիութենական դիմուլայի ժամանակաշրջանի մասնություն։ Վո՞րն եր այն ժամանակ ուղղիցիայի սիամը, Յեկտրանիւսիալ սիսալը։ Այն չե՞ր արդյոք, վորք ոսկովիցիան այն ժամանակ հարկադրանքը հնարակությանը երանակությանը երանակությանը ամուսնությանը կամաց աշխատել նրանց քրջանում և վոչ թե նրանցից պատվարիել (ոտքառյավածք) հնարովի յերեխայական—ձախ» լոգունդներով։

¹ Центральныи комитет союза транспортников—Сталинская премия
աշխատողների միության կենտրոնական կոմիտե։ Հայ. իրաւ. իմք։

թյունը, այնուամենայնիվ, սկսեց հարկադրանք գործադրել, սկսեց պնդել մեծամասնության վստահությամբ ոժոված մարդկանց «թափ տալու» վրա:

Ահա թե ինչ եր ասում այդ ժամանակ Լենինը կուսակցության Խ համադումարում արհեստակցական միությունների մասին արտասանած իր ճառում:

«Բանվոր դասակարգի ավանդարդի ու բանվորական մասսայի միջև փոխարքերություն, փոխառություն հաստատելու համար հարկավոր եր, յեթե Յեկարանը սխալ եր գործել... հարկավոր եր այն ուղղել: Բայց յերք այդ սխան սկսում են պաշտպանել, սպաքական վտանգի առլոյուր և զանում այդ: Յեթե չանձինք գեմոկրատիայի իմաստով առավելագույն հնարապորն այն տրամադրություններց, վոր այսուել արտահայտում և կուսուզովը, մենք կհանդիյնք քաղաքական կրախի: Ամենից առաջ մենք պիտի և համոզիմք և ապա հարկադրենք: Մենք պետք ենք ինչպես ել վոր լինի նախ համոզիմք և ապա հարկադրենք 1: Մենք չկարողացանք համոզել լայն մասսաներին ու խախտեցնք ավանդարդի ճիշտ հարաբերակցությունը մասսաների հետ» (տե՛ս Հ. ԽՍՀ, Եջ 235):

Նույն այդ բանն ե ասում Լենինն իր «Արհմիությունների մասին» բրոցյուրում.

«Մենք ա՛յս ժամանակ եյինք ճիշտ և հաջող կիրառում հարկադր, յերբ կարողանում եյինք նախ համոզման բազա ստեղծել նրա համար» (տե՛ս նույն տեղը, Եջ 74):

Յեվ այս միանդամայն ճիշտ ե: Վորովհետեւ առանց այդ պայմանների հնարավոր չե վոչ մի դեկավարություն: Վորովհետեւ միայն այդ կերպ կարելի յե ազահովել գործողությունների միասնականությունը կուսակցության մեջ, յեթե խոսքը վերաբերում է կուսակցությանը, դասակարգի գործողությունների միասնականությանը, յեթե խոսքը վերաբերում է դասակարգին՝ իր ամբողջությամբ առած: Առանց դրան բանվոր դասակարգի շարքերում կընի պառակտում, տարբնթացություն, քայքայում:

Սրանք են ընդհանուր առմանը կուսակցության ճիշտ դեկավարության հիմունքները:

Դեկավարության ամեն մի այլ ըմբռնում սինդիկալիզմ

1 Ընդլայնումն իմն ե: Ի. Ստ.:

ե, անարխիզմ ե, բյուրոկրատիզմ ե, այն ամենն ե, ինչ կուզեք, —միայն թե վոչ բոլցելիզմ, միայն թե վոչ լենինիզմ:

Պրոլետարիատի դեկատատուրան չի կարելի հարկադրել կուսակցության դեկավարությանը («դեկատատուրային»), յեթե առկա յեն ճիշտ փոխհարաբերություններ կուսակցության ու բանվոր դասակարգի միջև, ավանդարդի ու բանվորական մասսաների միջև: Բայց սրանից հետեւմ ե, վոր առավել ևս չի կարելի նույնացնել կուսակցությունը բանվոր դասակարգի հետ, կուսակցության դեկավարությունը («դեկատատուրան») բանվոր դասակարգի դեկատատուրայի հետ: Այն իման վրա, վոր կուսակցության «դեկատատուրան» չի կարելի հարկադրել պրոլետարիատի դեկատատուրային, ընկ. Սորինը յեկել ե այն սխալ յեղակացության, թե «ավրոլետարիատի դիկտատուրան միաժողովներության մասին չի խոսում: Դրա հետ մեկտեղ նա խոսում է «մասսաների դեկատատուրան առաջնորդների դեկատատուրային» հարկադրելու անթույլատերելիության մասին: Արդյոք չե՞ք հաճի այս իման վրա առաջնորդների դեկատատուրան նույնացնել պրոլետարիատի դեկատատուրայի հետ: Այս ուղիով ընթանալով՝ մենք պետք եւ ասելինք, վոր «ավրոլետարիատի դիկտատուրան միաժողովներության մասին իրավունքների դիկտատուրան ե»: Իսկ չե՞ք վոր, իսկապես ասած, կուսակցության «դեկատատուրան» պրոլետարիատի դեկատատուրայի հետ նույնացնելու քաղաքականությունը... հենց գետի այդ կմարդությունն ե տանում:

Ի՞նչ դրության մեջ ե այս տեսակետից գործն ընկ. Զինովիեվի մոտ:

Ծնկ. Զինովիյեվն, ըստ եյության, կանոնած ե կուսակցության «դեկատատուրան» պրոլետարիատի դեկատատուրայի հետ նույնացնելու հենց նույն տեսակետի վրա, ինչպես նաև ընկ. Սորինը, ստկայն այն տարբերությամբ, վոր ընկ. Սորինն ավելի շխատ ու ավելի սպարզ ե արտահայտվում, իսկ ընկ. Զինովիյեվը «ստավում ե»: Բայց ական ե վերցնել ընկ. Զինովյեվի «լենինիզմ» գրքից թեկուզ հետեւյալ տեղը, վորպեսզի համոզվենք դրանում

«Փոնչ ե,—ասում ե ընկ. Զինովյանը,—իՍՀ Միության մեջ գոյություն ունեցող հասարակակարգը՝ նրա դասակարգային բովանդակության տեսակետից: Դա—սրբութարիատի դիկտատուրա յէ: Վո՞րն ե իշխանության անմիջական դասանակը ԽՍՀՄ մեջ: Ո՞վ և իրականացնում բանվոր դասակարգի իշխանությունը: Կոմունիստակա՞ն կուսակցությունը կառավագությունը: Այս լմասում մեզ մոտ է կուսակցության դիկտատուրա յէ: Ի՞նչ իրավական ձև ունի իշխանությունը ԽՍՀՄ մեջ: Վո՞րն ե Հոկտեմբերյան հեղափոխության ստեղծած պետական կարգի նոր տիպը: Դա խորհրդային սիստեմն է: Մեկը բնալ չի հակասում մյուսին» (տե՛ս «Լենինը», Էջ 370—371):

Վոր մեկը մյուսին չի հակասում, այդ, իհարկե, ճիշտ է, յեթե ամբողջ բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության դիկտատուրա ասելով հասկանանք կուսակցության դեկավարությունը: Բայց ի՞նչպես կարելի յէ այս եիման վրա հավասարության նշան դնել պրոլետարիատի դիկտատուրայի ու կուսակցության «դիկտատուրայի» միջն, խորհրդային սիստեմի ու կուսակցության «դիկտատուրայի» միջն: Լենինը խորհուրդների սիստեմը նույնացնում էր պրոլետարիատի դիկտատուրայի հետ, և նա իրավացի յեր, վորովհետեւ խորհուրդները, մեր խորհուրդները, աշխատավոր մասսաներին պրոլետարիատի շուրջը համախմբելու կազմակերպություն են, յերբ դեկավարությունը դժոնվում է կուսակցության ձեռքին: Բայց յե՞րբ, վո՞րտեղ, իր վո՞րաշխատության մեջ և լենինը հավասարության նշան դըել կուսակցության «դիկտատուրայի» ու պրոլետարիատի դիկտատուրայի միջն, կուսակցության «դիկտատուրայի» ու խորհուրդների արտեմի միջն, ինչպես այդ այժմ ընկ. Զինովյանը ե անում: Պրոլետարիատի դիկտատուրային չի հակասում վո՞չ միայն կուսակցության դեկավարությունը («դիկտատուրան»), այլև առաջնորդների դեկավարությունը («դիկտատուրան»): Արդյոք չե՞ք հաճի, այս եիման վրա, հռչակել, վոր մեր յերկիրը պրոլետարիատի դիկտատուրայի յերկիր ե, այսինքն կուսակցության դիկտատուրայի յերկիր, այսինքն առաջնորդների դիկտատուրայի յերկիր: Իսկ չե՞ք վոր հենց դեալի այս հիմարությունն եւ տանում կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատու-

րայի հետ նույնացնելու «սկզբումքը», վոր դադարդողի ու անհամարձակ անց ե կացնում ընկ. Զինովյանը:

Լենինի բազմաթիվ աշխատություններում ինձ հաջողվել ե նշել միայն հինգ դեպք, վորտեղ լենինը հարևանցիրն շոշափում ե կուսակցության դիկտատուրայի հարցը:

Առաջին դեպքը—վա ես-երների ու մենչերին հետ ունեցած բանավեճն է, վորտեղ նա ասում ե.

«Յերբ մեզ հանդիմանում են մեկ կուսակցության դիկտատուրայի համար և առաջարկում են, ինչպես դուք լսել եք, միասնական սոցիալիստական ճակատ, մենք ասում ենք. «Այո՛, մե՛կ կուսակցության դիկտատուրա: Մենք սրա վրա յենք կանգնած և այդ հողից հեռանալ չենք կարող, վորովհետև այդ այն կուսակցությունն է, վորը տանամյակների ընթացքում ամբողջ Փարբիկա-դործարանային ու արդյունաբերական պրոլետարիատի ավանդարդի դիրք և նվաճել» (տե՛ս Հ. XXIV, Էջ 423):

Յերկրորդ դեպքն ե—«Նամակ բանվորներին ու դյուտացիներին կոլչակին հաղթելու առթիվ», —վորտեղ նա ասում ե.

«Գյուղացիներին վախեցնում են (մանավանդ մենչերին ու ես-երները, բոլորը, նույնիսկ նրանց քամիները) «Ճեկ կուսակցության», բոլշևիկ-կոմունիստների կուսակցության գործադրանքից խրութիւնների: Կոլչակի որինակը դյուղացիներին սովորեցրեց չվախենալ խրութիւններից: Կամ կավածատերերի ու կապիտալիստների դիկտատուրա (այսինքն յերկաթե իշխանություն), կամ բանվոր դասակարգի դիկտատուրա

(տե՛ս Հ. XXIV, Էջ 436):

Յերրորդ դեպքը—վա լենինի ճառն ե կոմինտերնի Ա կոնդրեսում՝ Տենների հետ բանավիճենիս: Վերը յես այդ ճառից ցիտատ բերել եմ:

Չորրորդ դեպքը—վա միքանի տող ե «Մանկական հիմնդությունը» բոլշևիկում: Համապատասխան ցիտատներն արդեն վերեւում բերված են:

Յեվ հինդերորդ դեպքը—վա պրոլետարիատի դիկտատուրայի վերաբերյալ սիսմայի ուրվագիծին, վոր հրապարակված ե III «Լենինյան ժողովածովում», վորտեղ կա «Մեկ կուսակցության դիկտատուրա» անումով յենթավերնադիր (տե՛ս «Լենինյան ժողովածովում» III, Էջ 497):

Հարկավոր ե նշել, վոր հինգ դեպքից յերկուսում,

1 Հնդկաստան իմն ե: Ի. Ստ.:

Վերջին ու յերկրորդ դեպքում, «մեկ կուսակցության դիկտատուրա» բառերը լենինը չակերտների մեջ ե առնում, ակնհայտ կերպով ընդդեմով այդ Փորմուլայի վոչ-ճշգրիտ, փոխարերական իմաստը:

Հարկավոր ե նույնակես նշել, վոր այդ բոլոր դեպքերում «կուսակցության դիկտատուրա» բանվոր դասակարգի նկատմամբ բառերի տակ լենինը հասկանում ե վո՛չ թե դիկտատուրա՝ այդ բառի բուն խմաստով («բռնության դրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության դեկտարություն:

Բնորոշ ե, վոր իր թե՛ հիմնական ու թե յերկրորդական աշխատություններից վոչ մեկում, ամենուրեք, վորտեղ լենինն արծարծում ե կամ պարզապես հիշատակում ե պրոլետարիատի դիկտատուրայի մասին ու պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմում կուսակցության դերի մասին, ակնարկ անդամ չկա, վոր «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան ե»: Բնդհակառակը, այդ աշխատությունների յուրաքանչյուր եջը, յուրաքանչյուր տողն աղաղակում ե այդպիսի Փորմուլայի դեմ (տե՛ս «Պետություն և հեղափոխությունը», «Պրոլետարական հեղափոխությունը և ունեղատ կառւցկին», «Մանկական հիմքանդությունը» և այլն):

Ե՛լ ավելի բնորոշ ե, վոր կոմինտերնի Ա կոնդրեսի՝ քաղաքական կուսակցության դերի վերաբերյալ թեղիներում, վորոնք մշակվել են լենինի անմիջական դեկտարությամբ, վորոնք լենինը բազմիցս վկայակոչում եր իր ճառությունը, վորակես կուսակցության դերի ու խնդիրների ճիշտ ձևակերպման տիպար, —մենք չենք դանում վո՛չ մի, տառացի վո՛չ մի խոսք կուսակցության դիկտատուրայի մասին: Ինչի՞ մասին ե խոսում այս ամենը:

Այն մասին, վոր,

ա) «կուսակցության դիկտատուրա» Փորմուլան լենինն անբասիր, ճշգրիտ չեր համարում, ուստի և լենինի աշխատություններում չափազանց հազվադեպ ե դործածվում այն ու յերեմն չակերտների մեջ ե առնվում.

բ) այն սակավաթիվ դեպքերում, յերբ լենինը հար-

կադրված եր՝ հակառակորդների հետ բանալիճելիս՝ խոսել կուսակցության դիկտատուրայի մասին, նա խոսում եր սովորաբար «մեկ կուսակցության դիկտատուրայի» մասին, այսինքն այն մասին, վոր մեր կուսակցությունը մենակ ե իշխանության դլուխ կանգնած, վոր նա իշխանությունը չի բաժանում ուրիշ կուսակցությունների հետ, ընդորում նա միշտ պարզաբանում եր, վոր կուսակցության դիկտատուրա բանվոր դասակարգի նկատմամբ ասելով՝ հարկավոր և հասկանալ կուսակցության դեկտարությունը, նրա դեկտարությունը:

շ) բոլոր այն դեպքերում, յերբ լենինը հարկավոր եր համարում դիկտականորեն բնորոշել կուսակցության դերը պրոլետարիատի դիկտատուրայի սկստեմում, նա խոսում եր բացառապես կուսակցության դեկտարակար դերի մասին (իսկ այդպիսի դեպքերը՝ հաղարներ են): բանվոր դասակարգի նկատմամբ.

թ) հենց այս պատճառով լենինը «դիմի չընկալվ» կուսակցության դերի վերաբերյալ հիմնական բանաձևի մեջ մտցնելու «կուսակցության դիկտատուրա» Փորմուլան. յես նկատի ունեմ կոմինտերնի Ա կոնդրեսի բանաձևը.

ե) լենինիզմի տեսակետով իրավացի չեն ու քաղաքականապես կարճատես են այն ընկերները, վորոնք նույնացնում են կամ՝ աշխատում են նույնացնել կուսակցության «դիկտատուրան», ուրեմն նաև «առաջնորդների դիկտատուրան», պրոլետարիատի դիկտատուրայի հետ, վորովհետեւ նրանք դրանով խախտում են ավանդարդի ու դասակարգի ճիշտ փոխհարաբերությունների սպայմանները:

ել չեմ խոսում այն մասին, վոր «կուսակցության դիկտատուրա» Փորմուլան, վերցրած առանց վերը մատնանըշված վերապահումների, կարող ե ստեղծել մի ամբողջ շարք վտանգներ ու քաղաքական մինուսներ մեր պրակտիկ աշխատանքում: Առանց վերապահումների վերցրած՝ այդ Փորմուլայով կարծես թե հուշում են

ա) անկուսակցական մասսաներին. չհամարձակվեք հակածառել, չհամարձակվեք դասողություն անել, վորովհե-

ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻ ՑԵՐԿՐՈՒՄ

ու կուսակցությունն ամեն ինչ կարող է, վորովհետև մեղ մոտ կուսակցության դիկտատորա յե.

բ) կուսակցական կադրերին. գործեցեք ավելի համարձակ, ավելի պինդ սեղմեցեք, կարելի յե և չունինդրել անկուսակցական մասսաների ձայնին, — մեղ մոտ կուսակցության դիկտատորա յե.

դ) կուսակցական վերնախավերին. կարող եք թույլ ըալ մեղ վորոշ ինքնադոհության շոայլություն, թերևս, կարելի յե նույնիսկ մի քիչ մեծամտել, վորովհետև մեղ մոտ կուսակցության դիկտատորա յե, «ուրեմն» նաև առաջնորդների դիկտատորա:

Այս վտանգների մասին տեղին ե հիշեցնել հասրկապես այժմ, մասսաների քաղաքական ակտիվության վերելքի ժամանակաշրջանում, յերբ մասսաների ձայնին կուսակցության ուշադիր ունկնդրելու պատրաստակամությունը մեղ համար առանձին արժեք ե ներկայացնում, յերբ զդայուն վերաբերմունքը դեպի մասսաների պահանջները մեղ կուսակցության հիմնական պատղամն ե, յերբ կուսակցությունից պահանջվում ե հասուլ չըջանկատություն ու հասուլ ճկունություն քաղաքականության մեջ, յերբ մեծամտելու վտանգը կուսակցության առաջ կանգնած ամենալուրջ վըտանգներից մեկն ե մասսաներին ճիշտ դեկալարելու դորժում:

Չի կարելի չվերհիշել լենինի վոսկե խոսքերը, վոր առել ե նա մեր կուսակցության Խ համադումարում.

«Ծոլութական մասսայի մեջ մենք (կոմունիստներս: Խ. Սար.) այնուամենայնիվ մի կաթիւ ենք ծովի մեջ, և մենք կարող ենք կառավարել միայն այն ժամանակ, յերբ ճիշտ ենք արտահայտում այն, ինչ վոր դիսակցում ե ժողովուրդը։ Առանց դրան կունունիստական կուսակցությունը չի առաջնորդի պրոլետարիատին, իսկ ոլորետարիատն իր հետեւց չի առնի մասսաներին, և ամբողջ մեքենան կկործանվի» (տե՛ս Հ. ԽՎԱՋԻ, եջ 256):

«Ճիշտ արտահայտել այն, ինչ վոր գիտակցում ե ժողովուրդը»— հենց այս ե այն անհրաժեշտ պայմանը, վորը կուսակցության համար առաջում ե հիմնական դեկալար ուժի պատվավոր դերը պրոլետարիատի դիկտատորայի սիստեմում։

«Հենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում (1924 թվականի առաջին հրատարակություն) կա մի յերկրություն առցիալիզմի հարթության հարցի վերաբերյալ յերկու ճեղակերպում։ Առաջին ճեակերպումն ասում ե.

«Առաջներում հեղափոխության հաղթությունը մի յերկրություն համարին ելին համարում, յնինթաղենով, թե բուրժուազիային հաղթելու համար անհրաժեշտ ե բոլոր առաջավոր յերկրների պրոլետարիատների միամբ, կամ, զոնե, այդպիսի յերկրների մեծ մասի պրոլետարիատի միատեղ յերությը։ Այժմ այդ տեսակետն այլևս իրականության չի համապատասխան հարկավորության վերաբերյան վերաբերյալ պարունակությունը, վորովհետեւ իմպերիալիզմի պայմաններում տարբեր կապահանգանությունը, զերծ դաշտավայրական յերկրների անհավասարաչափ ու թուչքածն զարդարացման բնույթը, զեպի անխոսավելի պատերազմներ տանող կառաստրովի հմակերպալիզմի ներսում, հեղափոխական շարժման աճումն աշխարհի բոլոր յերկրներում—այս ամենը տանում ե վոչ միայն դեպի պրոլետարիատի հաղթության հնարավորությունն առանձին յերկրներում, այլև դեպի այդ հաղթության անհրաժեշտությունը» (տե՛ս Հ. Խենինիզմի հիմունքների մասին):

Այս դրույթը միանդամայն ճիշտ ե, և այն կարու չե մեկնարանությունների։ Նա ուղղված ե սոցիալ-դեմոկրատների թեորիայի դեմ, վորոնք ուտոպիա յեն համարում պրոլետարիատի կողմից մի յերկրությունը իշխանությունը վերցնելը՝ առանց միաժամանակական հաղթական հեղափոխության մյուս յերկրներում։

Բայց «Հենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրում կա նաև յերկրորդ ճեակերպումը։ Այնտեղ ասված ե.

«Բայց ասպալել բուրժուազիայի իշխանությունը և պրոլետարիատի իշխանություն հաստատել մի յերկրությունը չի նշանակում ապահովել սոցիալիզմի լեգատար հաղթությունը։ Սոցիալիզմի գլխավոր խնդիրը—սոցիալիստական արտադրության կազմակերպումը—զեռևս մնում է առաջիկային։ Կարելի՞ յե արդյոք լուծել այդ խնդիրը, կարելի՞ յե արդյոք ժերել սոցիալիզմի վերջնական հաղթություն մի յերկրությունը միքանի առաջավոր յերկրների պրոլետարների միահամուռ ջանաբարի։ Վա՛չ, անհնարին ե։ Բուրժուազիայի տապալման համար բավական չերի։ Վա՛չ, անհնարին ե։ Բուրժուազիայի տապալման համար բավական չերի։

1 Խոսքը վերաբերում ե առաջին հրատարակությանը։

Են մի յերկի լանգերը, —այս և ասում մեզ մեր հեղափոխության պատմությունը։ Սոցիալիզմի վերջնական հաղթության համար, սոցիալիստական արտադրության կազմակերպման համար մի յերկի ջանքերը, մասնավանդ արնավախ գյուղացիական յերկրի, ինչպես Խորասատանն և, արդեն բավական չեն, դրա համար անհրաժեշտ են միքանի առաջավոր յերկրների պրոլետարների ջանգերը» (տե՛ս «Հենինիզմի հիմունքների մասին», առաջին հրատարակության)։

Այս յերկրորդ ձեռակերպումն ուղղված եր լենինիզմի քննադատների պնդումների դեմ, տրոցիկստների դեմ, վորոնջ հայտարարում ելին, թե պրոլետարիատի գիտատուրան մի յերկրում, յերբ բացակայում ե հաղթությունը մյուս յերկրներում, չի կարող «դիմանալ պահպանողական Յեվրոպայի հանդեպ»։

Այդ չափով—բայց միայն այդ չափով—այս ձեռակեպումն այն ժամանակ (1924 թ. ապրիլ) գոհացուցիչ եր, և այն, անկանոն, վորոշ ոդտակար ծառայություն մատուցեց։

Բայց հետագայում, յերբ լենինիզմի քննադատությունն այս մասում արդեն հաղթահարվել եր կուսակցության մեջ, և յերբ հերթի կանդնեց մի նոր հարց՝ մեր յերկրի ուժեղությունը, առանց դրսի ոգնության լիակատար սոցիալիստական հասարակությունը կառուցելու հնարավորության հարցը, — յերկրորդ ձեռակերպումը դուրս յեկավ արդեն ակնհայտորեն անդոհացուցիչ, ուստի և սխալ։

Վ. Պ. Ի. և այդ ձեռակերպման թերությունը։

Նրա թերությունն այն ե, վոր նա կապում, մի հարց և դարձնում յերկու տարրեր հարցեր։ մի յերկի ուժերով սոցիալիզմ կառուցելու հնարավորության հարցը, վորին դրական պատասխան պետք ե տրվի, և այն հարցը, թե պրոլետարիատի դիկտուտուրա ունեցող մի յերկի կարող ե իրեն լիսվին տպահովված համարել ինտերվենցիայից ու, հետեւարար, ին կարգերի ուստավլրացիայից, առանց հաղթական հեղափոխության մի շարք ուրիշ յերկրներում, մի հարց, վորին բացասական պատասխան պետք ե տրվի։ Ել յետ չեմ խոսում այն մասին, վոր այս ձեռակերպումը կարող ե առիթ տալ մտածելու, թե մի յերկրի ուժերով սո-

ցիալիստական համարակություն կազմակերպելն անհնարին ե, —մի բան, վորին, իհարկե, ճիշտ չե։

Այս հիման վրա յես ձեւափոխեցի, ուղղեցի այդ ձեռակերպումն իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ոռւսական կոմունիստների տակտիկան» բրոշյուրում (1924 թվի դեկտեմբեր), այդ հարցը բաժանելով յերկու հարցի—բուրժուական կարգերի ուստավլրացիայից լիովին ապահովվելու հարցի և մի յերկրում լիակատար սացիալիստական հասարակություն կառուցելու հնարավորության հարցի։ Այս բանին հասանք, նախ՝ «սոցիալիզմի լիակատար հաղթությունը» մենաբանելով՝ վորպես «միակատար ապահովություն» հին կարգերի վերականգնումից», վորը (ապահովությունը) հանարավոր ե լոկ «միքանի յերկրների պրոլետարների միահամուռ չանքերի» կարգով, և յերկրորդ՝ լենինի «Կոռպետական վասին» բրոշյուրի հիման վրա այն անվիճելի բացարձությունը հոչակելու միջոցով, վոր մենք ունենք ամեն անհրաժեշտը՝ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար (տե՛ս «Հոկտեմբերյան հեկությունը և ոռւսական կոմունիստների տակտիկան»)¹։

Հարցի այս նոր ձեռակերպումն ել ԽIV կուսակոնֆերենցիայի՝ «Կոմինտերնի և ՌԽԿ խնդիրների մասին» հայտնի բանաձևի հիմքը դարձավ, վորը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցը քննության եր առնում։ կապիտալիզմի հայունացման կապակցությամբ (1925 թ. ապրիլ) և մի հայտնացման կապակցությամբ (1925 թ. մայիսի 15) կառուցումը մեր յերկրի ուժերով հնարավոր սոցիալիզմի կառուցումը մեր յերկրի ուժերով հնարավոր ու անհրաժեշտ եր համարում։

Հենց այդ բանաձևը հիմք ծառայեց իմ՝ «ԽIV կուսակոնֆերենցիայի աշխատանքների հանրագումարների շուրջ» բանաձևի համար, վորը հրատարակվեց ԽIV կուսակոնֆերենցիայից անմիջապես հետո, 1925 թ. մայիսին։

Մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հարցադրման հարցի առթիվ այդ բրոշյուրում ասմած ե.

¹ Հարցի այս նոր ձեռակերպումը հետո փախարինեց նրա հին ձեռակերպմանը և լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրի հետագա հրատակությունների մեջ։

«Մեր յերկիրը նմրկայացնում և հակասությունների յերկու իռումբա չակասությունների մի խումբը—ներքին հակասություններն են, վորոնք դոյություն ունեն պղուկասարիատի ու գյուղացիության միջև (այսուղ խոսքը մի յերկրում սոցիալիզմի կառուցելու մասին ե: Ի. Ստ.): Հակասությունների մյուս խումբը—արտաքին հակասություններն են, վորոնք գյություն ունեն մի յերկրի վորպես սոցիալիզմի յերկրի և ըստր մասցած յերկրների՝ վորպես կապիտալիզմի յերկրների միջև (խոսքն այստեղ սոցիալիզմի վերջնական հաղթության մասին ե: Ի. Ստ.)»... «Ով շփոթում ե մի յերկրի ջանքերով միանալամայն հաղթահարելի հակասությունների սուաջին խումբը հակասությունների յերկրորդ խմբի հետ, վորոնք իրենց լուծման համար պահանջում են Ֆիքսնի յերկրների պրունաքանակի ջանքերը, —նա ամենակոպիտ սիալ և թույլ տալիու լինինիզմի հանդեպ, նա կամ խառնալիութիչ ե, կամ անուղղելի սովորականիստ» (տե՛ս «XIV կուսկոնֆերենցիայի աշխատանքների հանրադումարների շուրջը»):

Մեր յերկրում սոցիալիզմի հաղթելու հարցի առթիվ բրոցյուրն ասում է.

«Ենք կարող ենք սոցիալիզմ կառուցել և մենք այն կկառուցենք գյուղացիության հետ միասին, բանվոր դասակարդի ղեկավարությամբ»... Վորովհետեւ պարունակատի ղիկաստուրայի պայմաններում մեղ մոտ կան... բոլոր տվյալները, վորոնք անհրաժեշտ են, վորովհետի կառուցենք լիակատար սոցիալիստական հասարակություն, բոլոր և ամեն տեսակի ներքին դժվարությունները հաղթահարելով, վորովհետեւ մենք կարող ենք և մենք պետք ե հաղթահարենք դրանք մեր ունիտական ուժերով» (տե՛ս նույն տեղը):

Իսկ սոցիալիզմի վերջնական հաղթության հարցի առթիվ այստեղ ասված առ.

«Սոցիալիզմի վերջնական հաղթությունը լիակատար անսահման գյություն ե ինտերվենցիայի փորձերից, իսկ այդ Նշանակում ե նաև ռեստորացիայի փորձերից, վորովհետեւ ռեստորացիայի վորքանեւ լուրջ փորձ կարող ե տեղի ունենալ գրսի լուրջ աջակցությամբ միայն, միջազգային կապիտալի աջակցությամբ միայն: Այս պատճառով բոլոր յերկրների բանվորների աջակցությունը մեր հեղափոխությանը, իսկ առավել ևս այդ բանվորների հաղթությունը թեկուր միքանի յերկրներում՝ անհրաժեշտ պայմանն ե, վոր առաջին հաղթած յերկրը լիակատ ապահովված մանը սոցիալիզմի վերջնական հաղթության» (տե՛ս նույն տեղը):

Թվում ե, թե պարզ ե:

Հայտնի յե, վոր այդ հարցը նույն այդ վորովի մեկ-

նաբանալում՝ իմ՝ «Հարցեր ու պատասխաններ» բրոցյուրում (1925 թ. հունիս) և Համբեկ ԽIV համակառումարին կի-ի տվածքաղաքական հաշվետվության մեջ (1925 թ. դեկտեմբեր):

Սրանք են միաստեղը:

Այս վաստերը հայտնի յեն, յես կարծում եմ, բոլորին ու ամեն մեկին, այդ թվում նաև ընկեր Զինովյելին:

Յեթե հիմա, կուսակցության մեջ յեղած զաղախարային պայքարից գրեթե յերկու տարի անց և XIV կուսկոնքի ինցիդենտիայում ընդունված բանաձեկից (1925 թ. ապրիլ) հետո ընկեր Զինովյելը հնարավոր ե համարում XIV կուսկոնքադումարից (1925 թ. դեկտեմբեր) իր յեղախակման խոսքում դուրս քաշել Ստալինի 1924 թ. ապրիլին դրված բրոցյուրից հին, միանալամայն թերի, ձեւակերպումը վորպես բաղականացիս լուծելու համար արդեն լուծված հարցը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մասին,—ապա ընկեր Զինովյելի այս յուրուինակ մաներան այն ե ասում միայն, վոր նա վերջնականացիս խճճմել ե այս հարցում: Կուսակցությունը քաշել դեպի հետ այն բանից հետո, յերբ նա առաջ ե անցել, ըրջանցել ԽIV կուսկոնքի բանաձեկը այն բանից հետո, յերբ այն արդեն հաստատված ե կի-ի սլեհնումի կողմից, — այդ նշանակում ե անհուսալիորեն խրվել հակասությունների մեջ, չհամատար սոցիալիզմի կառուցման դորին, դուրս գալ կենինի ուղղուց և ստորագրել իր սեփական պարտությունը:

Ի՞նչ ե մի յերկրում սոցիալիզմի հաղթելու հնարավարարությունը:

Դա պրոետարիատի ու գյուղացիության միջև յեղած հակասությունները մեր յերկրի ներքին ուժերով լուծելու հնարավորությունն ե, պրոլետարիատի կողմից իշխանությունը վերցնելու և մեր յերկրում լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար այդ իշխանությունն ողտագործելու հնարավորությունը—մյուս յերենի կողմերի պրոլետարների համակրության ու աջակցության կամակրության կամակրության կամակրության մասն սոցիալիզմի վերջնական հաղթության»:

Առանց այդպիսի հնարավորության սոցիալիզմի կա-

ոռոցումն անհեռանկար կառուցում ե, կառուցում առանց սոցիալիզմի կառուցմանը հավատալու: Զի կարելի սոցիալիզմ կառուցել՝ հավատացած չլինելով, վոր այն կարելի յե կառուցել, հավատացած չլինելով, վոր մեր յերկրի տեխնիկական հետամնացությունը լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար անհաղթահարելի խոչընդուն չե: Այսպիսի հնարավորության ժխտումը չհավատալ ե սոցիալիզմի կառուցման գործին, նահանջ ե լենինիզմից:

Ի՞նչ ե մի յերկրում սոցիալիզմի լիակատար, վերջնական հաղթության անհնարինությունը՝ առանց հեղափոխության հաղթանակի մյուս յերկրներում:

Դա՝ ինտերվենցիայից, իսկ այդ նշանակում ե նաև բոլոժուական կարգերի ուստավքացիայից լիակատար ապահովություն ունենալու անհնարինություն ե՝ առանց հեղափոխության հաղթանակի, գոնե, մի շարք յերկրներում: Այս անվիճելի դրույթի ժխտումը նահանջ ե ինտերնացիոնալիզմից, նահանջ լենինիզմից:

«Մենք ապրում ենք, —ասում ե լենինը, —վո՞չ միայն սետության մեջ, այլ նաև պետությունների սիստեմի մեջ, և Խորհրդային Հանրապետության յերկարած դրույթյունն իմպերիալիստական պետությունների կողքին աներկայակելի յէ: Վերջնիբերջու կամ մեկը, կամ մյուսը հազարի: իսկ մինչև վոր այդ վերջը գա, մի շարք ամենասուկալի ընդարումներ Խորհրդային Հանրապետության և բոլոժուական պետությունների միջև անխուսափելի յնք: Այս նշանակում ե, վոր տիրապետող դասակարգը, պղուետարիատը, յեթե միայն նա ցանկանում ե տիրապետել ու տիրապետի, պետք ե ապացույի այդ նաև իր ուսպական կազմակերպությամբ» (տե՛ս հ. ՀХIV, եջ 122):

«Մենք մեր առջև ունենք, —ասում ե լենինը մի այլ տեղում, —վերին աստիճանի անկայուն, բայց և այնպէս՝ անկամածելի, անվիճելի վորչ մի հավաքարիչուություն: Արդյոք այդ յերկար կտեսի—չլինեմ և կարծում եմ, վոր այդ իմանալ չի կարելի: Ուստի և մեր կողմէց հարկավոր ե մեծագույն զգուշավորություն: Յեկ մեր քաղաքականության պատգամը, մեր մի տարվա կառավարական գործառնեյթյունից առաջին դասը, —մի դաս, վոր պետք ե յուրացնեն բոլոր բան-շրջապատված ենք այնպիսի մարդկանցով, դասակարգերով, կառավարություններով, վորոնք բացահայտորեն մեծագույն ատելություն են արտահայտում դեպի մեզ: Հարկավոր ե հիշել, վոր ամեն մի արշավանք մեր դիշտ մազից ե կախված» (հ. ՀХVII, եջ 177):

Թվում ե, թե պարզ ե:

Ի՞նչպես ե դրված մի յերկրում սոցիալիզմի հաղթեցու հարցն ընկ. Զինովյեվի մուտ:

Լսեցեք.

«Սոցիալիզմի վերջնական հաղթություն ամելով հարկավոր ե հասկանալ, գոնե՝ 1) դասակարգերի վոչնացումը և, հետևարար, 2) միագասակարդի դիկասատուրայի, տվյալ զերգում պրոլետարիատի դիկաստուրայի վերացումը»... «Վորպեսզի ե'լ ամելի ճշգրիտ պարզենք մեզ համար,—ասում և այսուհետեւ ընկ. Զինովյեվը,—թե հարցն ինչպես ե դրված մեզ մոտ՝ ԽՍՀՄ մէջ 1925 թվին, այսուք ե ասրբերենք յերկու գանձ 1) սոցիալիզմ կառուցելու ապահովագործությունը, հարկավ, վայվին ցիալիզմ կառուցելու այդպիսի հնարավորությունը, հարկավ, վայվին ցիալիզմի կարող և մտածվել նաև մի յերկրի շրջանակներում,—ու 2) սոցիալիզմի վերջնական կառուցումն ու ամբացումը, այսինքն՝ սոցիալիստական հասարակակարգի, սոցիալիստական հասարակության իրականացումը» (տե՛ս ընկ. Զինովյեվի «Հենինիզմը», եջ 291 և 293):

Ի՞նչ կարող ե նշանակել այս ամենը:

Հենց այն, վոր ասելով սոցիալիզմի վերջնական հաղթություն մի յերկրում՝ ընկ. Զինովյեվը հասկանում ե վո՞չ թե յերաշխիք ինտերվենցիայի ու ուստավլրացիայի դեմ, թե յերաշխիք ինտերվենցիային մի վորություն: Իսկ ասելով սոցիալիզմի հաղթություն մի յերկրում՝ ընկ. Զինովյեվը հասկանում է սոցիալիզմի այն պիսի կառուցում, վորը չի կարող և չաետք ե հասցնի սոցիալիզմի կառուցման: Կառուցում՝ յա բախտ, առանց հետապունկարի, սոցիալիզմի կառուցում, յերբ անհնարին և սոցիալիստական հասարակության կառուցումը, — այս ե ընկ. Զինովյեվի դիրքը:

Կառուցել սոցիալիզմ՝ առանց այն կառուցելու հնարավորության, կառուցել՝ իմանալով, վոր չես կառուցիր ահա թե ինչպիսի անհեթեթությունների յե հասնում ընկ. Զինովյեվը:

Այս մի տեղ ել ԽIV կուսհամագումարում ընկ. Զինովյեվի արտասահմած յեղափակման խոսքից:

«Դուք տեսեք, թե մինչև ուր ե հասել, որինակ, ընկ. Յակովյեվը

Կուրսկի նահանգական վերջին կուսկոնքներնցից յայում : «Արդյոք մենք կարո՞ղ ենք մի յերկուում ,—հարցնում ե նա ,—բոլոր կողմերից կտակիտալիստական թշնամիներով , ըրջապասալմած մինչեղով , կարո՞ղ ենք որդյուք այսպիսի պայմաններում սոցիալիզմ կառուցել մի յերկուում : Ենդ պատասխանում ե . «Ամբողջ ասպամական վրա մենք իրավունք ունենք առելու , վոր մենք վո՞չ միայն կառուցում ենք սոցիալիզմ , այլ վոր մենք , չնայած այն բանին , վոր առաջմ մենք մենակ ենք , ասայժմ մենք միակ խորհրդային յերկիրն ենք , միակ խորհրդային պետությունն աշխարհում , մենք այդ սոցիալիզմը կառուցենք» («Հյուրեա որակաձա», № 279, 1925 թ. դեկտ. 8) : Մի՞նչ սու հարցի լենինյան պրաւմն ե , մի՞րի սրամից ազգային սահմանափակության հոս չի փշում : 1:

Այսպիսով , ըստ Զինովյեվի դուրս ե գալիս , վոր մի յերկուում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունն ընդունել — նշանակում ե կանոնել ազգային տահմանախակության տեսակետի վրա , իսկ ժխտել այդպիսի հնարավորությունը — նշանակում ե կանոնել ինտերնացիոնալիզմի տեսակետի վրա :

Բայց յեթե այդ ճիշտ ե , — արժե՞ արդյոք ընդհանրապես պայքար մղել մեր տնտեսության կազիտալիստական տարերին հաղթելու համար : Սրանից չի հետեւում արդյոք , վոր այդպիսի հաղթությունն անհնարին ե :

Կապիտուլացիա մեր տնտեսության կապիտալիստական տարերի հանդեպ — ահա թե ուր ե հասցնում ընկ . Զինովյեվի փաստարկման ներքին տրամարանությունը :

Յեվ այս անհեթեթությունը , վորն ընդհանուր վոչինչ չունի լենինիզմի հետ , ընկ . Զինովյեվը հրամցնում ե մեղ վորպես «ինտերնացիոնալիզմ» , վորպես «հարյուր տակուանի լենինիզմ» :

Յեւ պնդում եմ , վոր սոցիալիզմի կառուցման կարելուրագույն հարցում ընկ . Զինովյեվը նահանջում ե լենինիզմ , ոլորվելով մինչև մենչեկի Սուլիմովի տեսակետը :

Դիմենք լենինին : Ահա թե նա ինչ ե ասում մի յերկուում սոցիալիզմի հաղթելու մասին դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը , 1917 թվի ողոստոսին .

«Ճնտեսական ու քաղաքական գորդացման անհավասարաչափությունը կապիտալիզմի անպայմանական որենքն ե : Այստեղից հետեւմ ե , վոր

սոցիալիզմի հաղթությունը հնարավոր և նախապես միջանի կամ նույնի խև առանձին վերցքած մի կազիտալիստական յերկուում : Այդ յերկու հաղթած պրոլետարիատը , երազուությացիալի լենթարկելով կազիտալիստական ուրիշություն ու իր մուս սոցիալիստական արտադրություն կազմակերպի լով , իծառանար մնացած գնամ , կազիտալիստական աշխարհի դեմ , իր կողմը դրավելով մյուս յերկրների ճնշված գասակարգվերին , այդ յերկրներում ապօտամությունն բարձրացնելով կազիտալիստական դեմ , անհրաժեշտության դեպքում նույնիսկ ուղղական ուժով զուրս դալով շահագրդ ծով գասակարգերի ու նրանց պետությունների գեմ» (առ 4 . XVIII , էջ 232—233) :

Ի՞նչ ե նշանակում լենինի ընդդժված ֆրազը՝ «իր մոտ սոցիալիստական արտադրություն կազմակերպելով» : Այդ նշանակում ե , վոր հաղթած յերկրի պրոլետարիատը կարող ե և պետք ե , իշխանություն վերցնելուց հետո , իր մոտ սոցիալիստական արտադրություն կազմակերպի : Իսկ ի՞նչ ե նշանակում «սոցիալիստական արտադրություն կազմակերպել» : Այդ նշանակում ե սոցիալիստական հասարակություն կառուցելու : Հաղիվ թե հարկ կա ապացուցելու , վոր լենինի այս պարզ ու վորոշ գրույթը կարուս չե հետադատելնաբանությունների : Հակառակ դեպքում անհասկանալի կլինիյին լենինի կոչերը , վոր պրոլետարիատը 1917 թվի հոկտեմբերին իշխանությունը վերցնի :

Դուք տեսնում եք , վոր լենինի այս պարզ գրույթը տարբերվում ե , ինչպես յերկինքը յերկրից , ընկ . Զինովյեվական չափությունը այն մասին , մի խառնաշփոթ ու հակալենինյան «գրույթից» այն մասին , վոր մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել «մի յերկրի վաղանակներում» նրա կառուցման անհնարինության պայմաններում :

Լենինն այս ասել ե 1915 թվին , մինչև պրոլետարիատի իշխանությունը վերցնելը : Բայց գուցե նրա հակովից իշխանությունը վերցնելու փորձից յաջքները կունենալ են իշխանությունը վերցնելու փորձից յաջքները համարի կողմէ կուպերացիայի հետո , 1917 թվից հետո : Դիմենք լենինի «կոոպերացիայի մասին» բրոցյուրին , վորը գրված ե 1923 թ. :

Ժրոք վոր , —ասում ե լենինը , —պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոշների նկատմամբ , պետության իշխանությունը պրոլետարիատի ձեռքին , այդ պրոլետարիատի դաշնիքը բաղկանում մանը ու մանրազույն գյուղացիների հետ , դյուղացիության մամիկոն :

1 ընդգծումն իմն ե : ի . Ստ. :

գեկավարումն այդ սըստետարիատի համար ապահովելը և այլն, —մի՞քենա այն ամենը չե, ինչ հարկավոր ե, վորպեսզի կոռպեքտիայից, միմիայն կոռպեքտիայից, վորը մենք առաջ քամահրում ենինք, վորովաչքիական կոռպեքտիա, և վորը վրոշ տեսակետից իրավունք ունենք քամահրելու այժմ՝ ների պայմաններում նույնպես, —մի՞քն սա ամեն անհրաժեշտը չե՝ լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար 1: Այդ գեռես սոցիալիստական հասարակություն կառուցումը չե, բայց այդ այն ամենն ե, ինչ անհրաժեշտ ե և բավական՝ այդ կառուցման համար»¹ (տե՛ս համ. XXVII, էջ 392):

Այլ կերպ ասսած՝ մենք կարող ենք և ուետք ե կառուցենք վայակատար սոցիալիստական հասարակություն, վորովհետև մեր տրամադրության տակ մենք ունենք այն ամենը, ինչ անհրաժեշտ ու բավական ե այդ կառուցման համար:

Թվում ե՝ դժվար ե ամելի պարզ արտահայտուել:

Համեմատեցեք լենինի այս կլասիկ դրույթն ընկ Զինովյեվի կողմից ընկ. Յակովլեվի դեմ ուղղված հակալենինյան հարձակման հետ և կհասկանաք, վոր Յակովլենիք միայն լրինել և լենինի խոսքերը մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին, իսկ Զինովյեվը, այդ դրույթի դեմ դուրս դարով, ընկ. Յակովլենին խարազանելով, հեռացել և լենինից ու կանգնել մենշենկի Սովումանովի տեսակետի վրա, մեր յերկրում՝ նրա տեխնիկական հետամնացության պատճառով՝ սոցիալիզմ կառուցելու անհնարինության տեսակետի վրա:

Հայտնի չե միայն, թե ել մենք ինչի՞ համար ենինք 1917 թ. հոկտեմբերին իշխանությունը վերցնում, յեթե նպատակ չունեյինք սոցիալիզմ կառուցելու:

Հարկավոր չեր իշխանությունը վերցնել 1917 թ. հոկտեմբերին, —ահա թե ինչ յեղափակացության և բերում ընկ. Զինովյեվի վաստարկման ներքին տրամաբանությունը:

Չես անդում եմ այնուհետև, վոր սոցիալիզմի հաղթության կարևորագույն հարցում ընկ. Զինովյեվը դեմ ե դնացել մեր կուսակցության վրոշակի վճիռներին, վորոնք արձանագրված են XIX կուսակնֆերենցիայի՝ «Կոմինտերնի»

և ԲԻ(բ)Կ խնդիրների մասին՝ կիգկի-ի¹ բնդլայնված պլենումի կապակցությամբ» հայտնի բանաձեռնում:

Դիմենք այս բանաձեռնումն է: Ահա թե ինչ ե ասված այն տեղ մի յերկրում սոցիալիզմի հաղթությունը մասին:

«Յերկու ուղղակի հակաղիք հասարակական սիստեմների առկայությունն առաջ ե բերում կապիտալիստական բլոկադի, տնտեսական ճշնաման ուրիշ ձևերի, զինված բնտերվենցիայի, ուստալրացիայի մշտական սպառնալիքը: Հետևաբար, սոցիալիզմի վերջնական հաղթության միակ յերաշխիք, այսինքն ապահովություն ուստալրացիայից ², հանդիսանում է հաղթական սոցիալիստական հեղափոխությունը մի շարք յերկը-ներում... «Լենինիզմն ուսուցանում ե, վոր սոցիալիզմի վերջնական հաղթությունը՝ բորժուական հարաբերությունների ուստալրացիայից լիովին ապահով լինելու իմաստով 2 հնարավոր ե միայն միջազգային մասշտաբով»... «Սրանից բնալ չի բդյում 2, թե անհնարին և լիակատար սոցիալիստական հասարակության 2 կառուցումն այնպիսի մի հետամնաց յերկրում, ինչպես Ռուսաստանն ե, առանց տեխնիկա-տնտեսական տեսակետից ավելի զարգացած յերկրների «ակտական ոգնության» մրա «Լենինիզմ» դրագում:

Դուք տեսնում եք, վոր բանաձեռն սոցիալիզմի վերջնական հաղթությունը մեկնարանում ե վորպես ապահովություն ինտերվենցիայից ու ուստալրացիայից, — ի լիակատար հակադրություն ընկ. Զինովյեվի մեկնարանության նրա «Լենինիզմ» դրագում:

Դուք տեսնում եք, վոր բանաձեռն ընդունում ե լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորությունը մի այնպիսի հետամնաց յերկրում, ինչպես Ռուսաստանն ե, առանց տեխնիկա-տնտեսական տեսակետից ավելի զարգացած յերկրների «ակտական ոգնության» ի լիակատար հակադրություն ընկ. Զինովյեվի հակառակ պնդման՝ XIX կուսամագումարի իր յեղափակման նոսագում ընկ. Յակովլեվի պայքարը XIX կուսակոնֆերենցիայի բանաձեռնի դեմ:

Ինչպես անվանենք այս, յեթե վոք ընկ. Զինովյեվի պայքարը, կուսակցական բանաձեռն յերբեմն անթերի համարկե, կուսակցական բանաձեռնը յերբեմն անթերի

¹ Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտե: Հայեատանի խմբ:

² Ընդդեռնում իմն ե: Ի. Ստ.

շեն։ Պատահում ե, վոր կուսակցական բանաձևերը սխալ-ներ են պարունակում։ ԲնդՀանրապետ ասած՝ կարելի յե յենթաղբել, վոր XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը նույն-պես վորոշ սխալներ ե պարունակում։ Հնարավոր ե, վոր ընկ. Զինովյելը սխալ ե համարում տվյալ բանաձևը։ Բայց այն ժամանակ դրա մասին պետք ե խոսել պարզ ու բացահայտ կերպով, ինչպես բոլշևիկին ե վայել։ Սակայն ընկ. Զինովյենին ինչ-վոր պատճառով այդ չի անում։ Նա գերադասել ե ընտրել ուրիշ ուղի, XIV կուսկոնֆերենցիայի բանաձևը թիկունքային դրուների յենթարկելու ուղին, յերբ ըսություն ե պահպանում այդ բանաձևի մասին և բացակայում ե բանաձևի վորեւե բացահայտ քննադատություն։ Բնկ. Զինովյելը յերկի կարծում ե, թե այդ ուղին ամենից լավ ե հասնում նպատակին։ Իսկ նրա նպատակը մեկ ե «բարելավել» բանաձևը և «մի քիչ» ուղղել Լենինին։ Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր ընկ. Զինովյենը ուղևալել ե իր հաշիվներում։

Վո՞րտեղից ե ծագում ընկ. Զինովյենի սխալը։ Վո՞րտեղ ե այդ սխալի արմատը։

Այդ սխալի արմատն, ըստիս, այն ե, վոր ընկ. Զինովյելը հավատացած ե, թե մեր յերկրի տեխնիկական հետամնացությունը լիակատար սոցիալիստական հասարակության կառուցման անհաջողակելի խռընդուռ ե, թե մեր յերկրի տեխնիկական հետամնացության չնորհիվ պրոլետարիատը չի կարող սոցիալիզմ կառուցել։ Ընկ. Զինովյենը ու ընկ. Կամենեվը մի ժամանակ փորձ եկին անում այդ վաստարկով հանդես գալու կուսակցության կե-ի-նիստորեն կուսկոնֆերենցիայի նախորենին։ Բայց նըրանք հակահարված ստացան և հարկադրված յեղան նահանջել, ձևականորեն յենթարկելով հակադիր տեսակետին, կե-ի-ի մեծամասնության տեսակետին։ Բայց, նրան ձևականորեն յենթարկվելով, ընկ. Զինովյենը ամբողջ ժամանակ շարունակում եր պայքարը նրա դեմ (տե՛ս ընկ. Զինովյելի «Լենինիդմ» գիրքը և յեղափակման խոսքը XIV կուսհամագումարում)։ Ահա թե ինչ ե ասում Համեկ կե-ում ուղղի ունեցած այդ «միջադեպի» մասին մեր կուսակցու-

թյան Մոսկվայի կոմիտեն՝ Լենինգրադի նահանգական կուսկոնֆերենցիայի նամակին տվյալ իր «պատասխանում»։

Այնքան ել վաղուց չե, վոր ընկերներ կամենելին ու Զինովյելը Քաղցրույում պատսպանում երին այն տեսակետը, թե իրը մենք չենք կարող գուրս գալ ներքին գվարությունների տակից՝ մեր տեխնիկական ու տնտեսական հետամնացության չնորհիվ, յեթե միայն մեզ չփրկի միջազգային հեղափառությունը։ Իսկ մենք, կե-ի-ի մեծամասնության հետ մեկտեղ, կարծում ենք, վոր մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել, կառուցում ենք, կառուցենք այն, չնայած մեր տեխնիկական հետամնացության ու հակառակ նրան։ Մենք կարծում ենք, վոր այդ չենաբարությունն ընթանալու յե, իհարկե, շատ ավելի զանգալ, քան համաշխարհային հաղթության պայմաններում, բայց և այնպես մենք առաջ ենք զնում ու պիտի զնանք։ Մենք ճիշտ նույնպես կարծում ենք, վոր ընկ. կամենեվի ու Զինովյելի տեսակետն արտահայտում ե վոր ընկ. ընկ. կամենեվի ու Զինովյելի բասակարգի ու նրա հետեւյց զնացող դյուչհավատալը մեր բանվոր գասակարգի ու նրա հեղափառ կարծում ենք ինքը։ Մենք կարծում ենք, վոր այդ զայդական մասամների ներքին ուժերին։ Մենք կարծում ենք, վոր այդ առականությանը նահանջ ե լենինյան գիրքից» (տե՛ս «Պատասխանը»)։

Այս փաստաթուղթը մամուլի մեջ յերեան յեկավ XI^o կուսհամագումարի առաջին նիստերի ժամանակ։ Ընկ. Զինովյելին, իհարկե, հասրավորություն ուներ դեռևս համագումարում դուրս դալու այս փաստաթղթի դեմ։ Բնորոշ ե, վոր ընկ. ընկ. Զինովյելի ու կամենեվի մոտ փաստաթղեների մեջ չդատավորեցին այս ծանր մեղադրանքի դեմ, վոր նրանց դեմ առաջադրել եր մեր կուսակցության Մոսկվայի կոմիտեն։ Պատահական ե արդյոք այս։ Եեւ կարծում եմ, վոր պատահական չե։ Մեղադրանքը, ըստ յերեան դիպակ նույնականության մեջ կամենեվը լուսությամբ արտադրանքին, վորովհետեւ բան չունեցին այն «ծածկելու» (կրյու) համար։

Նոր ուղղիցիան վիրավորվում ե, վոր ընկ. Զինովյելին մեղադրում են սոցիալիստական շինարարության հաղթության դործին մեր յերկրում չհայլատալու մեջ։ Բայց յեթե ընկ. Զինովյելը մի յերկրում սոցիալիզմի հաղթելու մի ամբողջ տարի քննարկելուց հետո, ընկ. Զինովյելի տեսակետը կե-ի-ի Քաղցրությունից մերժվելուց հետո (1925 թ. առլրիլ), այն բանից հետո, յերբ արդեն հարցի մասին կազմվել ե կուսակցության վորոշակի այդ հարցի մասին կազմվել ե կուսակցության վորոշակի կարծիքը, վորն արձանադրվել ե և XIV կուսկոնֆերենցիայի կարծիքը, վորն արձանադրվել ե և XIV կուսկոնֆերենցիայի կարծիքը։

Հայունի բանաձմռում (1925 թ. ապրիլ), յեթե այս ամենից հետո ընկ. Զինովյեվը վճռում է իր «Լենինիզմ» դրքում դուրս դալ (1925 թ. սեպտեմբեր) կուսակցության տեսակետի դեմ, յեթե նա այնուհետև կրկնում է այդ յելույթը XIV համագումարում, — ապա ի՞նչպես բացատրել այդ ամենը, այդ համառությունը, իր սիսալը պաշտպանելու այդ հաստատակամությունը, յեթե վոչ նրանով, վոր ընկ. Զինովյեվը վարակված, անհուսալի կերպով վարակված և չհավատարով սոցիալիստական շինարարության հաղթությանը մեր յերկրում:

Ընկ. Զինովյեվին հաճելի յէ իր այդ չհավատալը մեկնաբանել վորպես ինտերնացիոնալիզմ: Բայց այդ յերբանից ե, վոր ինինիզմի կարդինալ հարցում լենինիզմից նահանջելն սկսել է մեկնաբանել մեղանում վորպես ինտերնացիոնալիզմ:

Արդյո՞ք ավելի ճիշտ չի լինի ասել, վոր այստեղ վո՛չ թե կուսակցությունը, այլ ընկ. Զինովյեվն և մեղանչում ինտերնացիոնալիզմի ու միջազգային հեղափոխության դեմ: Վորովհետև ի՞նչ ե «կառուցվող սոցիալիզմ» մեր յերկիրը, յեթե վոչ համաշխարհային հեղափոխության բաղա: Բայց արդյո՞ք նա կարող ե լինել համաշխարհային հեղափոխության իսկական բաղա, յեթե նա ընդունակ չե սոցիալիստական հասարակություն կառուցելու: Նա կարո՞ղ ե արդյոք մնալ այն մեծադույն ձողզական կենտրոնը բոլոր ժմրկների բանվորների համար, վորպիսին նա, անտարակույս, հանդիսանում ե այժմ, յեթե նա անընդունակ ե իր յերկրում հաղթություն ձեռք բերելու մեր տնտեսության կազմակերպության տարրերի նկատմամբ, ձեռք բերելու սոցիալիստական շինարարության հաղթություն: Յես կարծում եմ, վոր չի կարող: Բայց սրամից չի՞ հետեւամ արդյոք, վոր սոցիալիստական շինարարության հաղթությանը չհավատալը, այդ չհավատալու քարոզը տանում ե դեպի մեր յերկրի՝ վորպես համաշխարհային հեղափոխության բազայի՝ պատկաղրկումը, իսկ մեր յերկրի պատկաղրկումը տանում ե դեպի համաշխարհային պատկաղրկումը, իսկ մեր յերկրի պատկաղրկումը տանում ե դեպի համաշխարհային պատկաղրկումը:

66

Ինչո՞վ եյին խրտնեցնում մեղանից: Քարոզ կարուալով այն մասին, թե «ուուների մոտ վոչինչ դուրս չի գա»: Մենք հիմա ինչո՞վ ենք խիում սոցիալ-դեմոկրատներին, բանվորական պատվիրակությունների ամբողջ շարաններ՝ դրավելով դեպի մեր յերկիրը և դրանով իսկ ամրացնելով կոմունիզմի դիրքերն ամբողջ աշխարհում: Մեր հաջողություններով սոցիալիզմի կառուցման դործում: Բայց մի՞թե որանից հետո պարզ չե, վոր նա, ով քարոզում է չհավատալ մեր հաջողություններին սոցիալիզմի կառուցման դործում, նա անուղղակի կերպով ոգնում է սոցիալ-դեմոկրատներին, նա թուլացնում է միջազգային հեղափոխական շարժման թափ, նա անխուսափելիորեն նահանջում է ինտերնացիոնալիզմից...

Դուք տեսնում եք, վոր ընկ. Զինովյեվի «ինտերնացիոնալիզմի» դործը բոլորովին ել ավելի լավ վիճակում չե, քան նրա «հարյուրտոկոսանոց լենինիզմի» դործը՝ մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հարցում:

Այս պատճառով XIV կուսամագումարը ճիշտ վարվեց՝ նոր ոպողիցիայի տեսակետները բնորոշելով վորպես «սոցիալիզմի կառուցման դործին չհավատալ» ու «լենինիզմի խեղաթյուրում»:

7II

**ՊԱՅՔԱՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՀԱՂԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

Յես կարծում եմ, վոր սոցիալիստական շինարարության հաղթությանը չհավատալը նոր ոպողիցիայի հիմնական սիրալն է: Այդ սխալն, ըստիս, հիմնական ե այն պատճառով, վոր նրանից են բղխում նոր ոպողիցիայի մնացած բոլոր սխալները: Նոր ոպողիցիայի սխալները նեպի, պետկապիտալիզմի, մեր սոցիալիստական արդյունաբերության բնույթի հարցում, պրոլետարիատի դիկտատորայի որով կոռպերացիայի դերի հարցում, կուլակության դեմ պայքարելու մեթոդների, միջակ գյուղացիության դերի ու տեսակարար կշռի հարցում, —այս բոլոր սխալներն ածանցվում են

67

սպողիցիայի հիմնական սխալց՝ մեր յերկրի ուժելով սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորությանը չհալատալուց:

Ի՞նչ բան ե մեր յերկրի սոցիալիստական շինարարության հաղթությանը չհալատալը:

Ամենից առաջ, դա վաստահության բացակայությունն ե այն բանի նկատմամբ, թե գյուղացիության հիմնական մասսաները կարող են՝ մեր յերկրի զարգացման հայտնի պայմանների շնորհիվ՝ ներքաշվել սոցիալիստական շինարարության գործի մեջ:

Եթերկրորդ, դա վաստահության բացակայությունն ե այն բանի նկատմամբ, թե մեր յերկրի պրոլետարիատը, վորն իր տրամադրության տակ ունի ժողովրդական տնտեսության իշխող բարձունքները, ընդունակ ե գյուղացիության հիմնական մասսաներին ներքաշելու սոցիալիստական շինարարության գործի մեջ:

Այս դրույթներից ե լրելայն յենում ոպողիցիան մեր զարգացման ուղիների վերաբերյալ իր կառուցումներում, — միևնույն ե՝ նա այդ բանը դիտակցաբար ե անում արդյոք, թե անդիտակցաբար:

Արդյո՞ք կարելի յէ խորհրդային գյուղացիության հիմնական մասսան ներքաշել սոցիալիստական շինարարության գործի մեջ:

«Լենինիդմի հիմունքների մասին» բրոցյուրում այդ առթիվ կա յերկու հիմնական դրույթ.

1) «Սորչրտային Միության գյուղացիությունը չի կարելի չփոթել Արեմուտքի գյուղացիության հետ: Մի գյուղացիություն, վորն անցել ե յերեք հեղափոխության դպրոց, կովել ցարի գեմ ու բուրժուական իշխանության գեմ՝ պրոլետարիատի հետ մեկնել և պրոլետարիատի զլամությամբ, մի գյուղացիություն, վորը հող ու հաշտություն և ստացել պրոլետարական հեղափոխության ձեռքից և դրա շնորհիվ դարձել և պրոլետարիատի ուղերվը, — այդ գյուղացիությունը չի կարող չտարբերվել այն գյուղացիությունից, վորը բուրժուական հեղափոխության ժամանակ կովել և լիբերալ բուրժուազիայի զլամությամբ, հողն ստացել և այդ բուրժուազիայի ձեռքից և դրա շնորհիվ դարձել և բուրժուազիայի ուղերվը: Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր խորհրդադային գյուղացիությունը, վորը սովորել ե դնահատել քաղաքական բարեկամությունն ու քաղաքական համագործակցությունը պրոլետա-

թատի հետ և իր ազատությունը պարտական ե այլ բարեկամության ու այդ համագործակցությանը, — չի կարող չկազմել բացառիկ նպաստավոր նյութ՝ պրոլետարիատի հետ տնտեսական համագործակցություն ունենալու համար»:

2) «Բուսաստանի գյուղատնտեսությունը չի կարելի չփոթել Արեմուտքի գյուղատնտեսության հետ: Այսուղեղ գյուղատնտեսության զարդացումն ընթանում է կապիտալիզմի սովորական գծով, գյուղացիության խորշերավորման պայմաններում, մի բնեուում ունենալով խոչընկալվածքները ու մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաներ, մյուսում՝ պառաւպերիզմ, թշվառություն ու վարձու ստրկություն: Դրա շնորհիվ փլուզումն ու քայլայումն այնուղեղ միանգամայն բնական են: Այդպես չե նուսաստանում: Մեզ մոտ գյուղատնտեսության գարգացումը չի կարող ընթանալ այդպիսի ուղղով թեսկուց հենց այն պատճառով, վոր Խորհրդային իշխանության առկայությունը և արտադրության հիմնական գործ՝ չների ու միջոցների աղջայնացումը չեն թույլատրում այդպիսի զարգացում: Բուսաստանում գյուղատնտեսության զարգացումը սկետք և ընթանա ուրիշ ուղիով, միկրոնալոր մանր ու միջակ դյուցացիությունը կոռպերացման ուղիով, պետության աջակցությունն արտոնյալ վարկավորման կարգով վայելող մասսայական կոռպերացիան դյուզում զարգացնելու ուղիով: Կոռպերացիայի վերաբերյալ հորմաններում կենինը ճիշտ ե մասնանշել, վոր գյուղատնտեսության զարգացումը մեզ մոտ պետք և ընթանա նոր ուղիով, գյուղացիների մեծամասնությունը կոռպերացիայի միջոցով սոցիալիստական շինարարության մեջ ներդրավելու ուղիով, գյուղատնտեսության մեջ կոլկտիվիզմի սկզբունքներն աստիճանաբար արմատացնելու ուղիով՝ սկզբում գյուղատնտեսության արտադրաքների վաճառահանման բնակալառում, սովա և նրանց արտադրության բնագավառում»... «Հազիվ թե հարկ կա ապացուցելու, վոր գյուղացիության հակայական մեծամասնությունը սիրով վոտք կդնի զարգացման այս նոր ուղին, զեն նետելով մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիաների ու վարձու ստրկության ուղին, թշվառության ու քայլայման ուղին»:

Ճի՞շտ են արդյոք այս դրույթները:

Յետ կարծում եմ, մոր այս յերկու դրույթն ել ճիշտ ու անլիմենտի յեն մեր ամերով շինարարական ժամանակա- մը միանի համար նեպի սպայմաններում:

Նրանք միայն արտահայտությունն են լենինի այն հայտնի թեղիսաների, վորոնք վերաբերում են պրոլետարիատի ու գյուղացիության զոդմանը, գյուղացիական տնտեսությունները յերկրի սոցիալիստական զարգացման սիրում՝ մի մեջ մտցնելում, այն բանին, վոր պրոլետարիատը պետք և շարժվի դեպի սոցիալիզմ գյուղացիության հիմնական

մասսաների հետ միասին, վոր գյուղացիության միլիոնավոր մասսաների կոռպերացումը գյուղում կատարվող սոցիալիստական շինարարության լայն ճանապարհն է, վոր մեր սոցիալիստական խնդուստրիայի աճման պայմաններում «կոռպերացիայի սուսական աճումը մեզ համար սոցիալիզմի աճման հետ նույնական է» (տե՛ս հ. Հ. ԽՎԴII, էջ 396):

Իմաստես, ի՞նչ ճանապարհով կարող ե և պետք ե ընթանա գյուղացիական տնտեսության դարձացումը մեր յերկրում:

Գյուղացիական տնտեսությունը կապիտալիստական տնտեսություն չե: Գյուղացիական տնտեսությունը, յեթե վերցնենք գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը, մանր-ասլրանքային տնտեսություն ե: Իսկ ի՞նչ բան ե մանր-ասլրանքային գյուղացիական տնտեսությունը: Այդ մի տնտեսություն ե, վոր կանոնած ե կապիտալիզմի ու սոցիալիզմի միջի ճամբարաժանին: Այն կարող ե զարգանալ թե՛ դեպի կապիտալիզմը, ինչպես այդ տեղի յե ունենում այժմ կապիտալիստական յերկրներում, թե՛ դեպի սոցիալիզմը, ինչպես այդ պետք ե տեղի ունենա մեղ մոտ, մեր յերկրում, պրոլետարիատի դիկտատուրայի որով:

Վո՞րտեղից ե գյուղացիական տնտեսության արդարիսի անկայունությունը, անինքնուրույնությունը: Ինչո՞վ բացատրել այն:

Այն բացատրվում ե գյուղացիական տնտեսությունների ցրվածությամբ, նրանց մնակազմակերպվածությամբ, այն կախումով, վոր նրանք ունեն քաղաքից, ինդուստրիայի, վարկային սիստեմից, յերկրի իշխանության բնույթից, վերջապես, բացատրվում ե այն հանրահայտ դրույթով, վոր գյուղը դնում ե ու պետք ե գնա քաղաքի հետեւից ինչպես նյութական, այնպես ել կուլտուրական տեսակետից:

Գյուղացիական տնտեսության զարգացման կապիտալիստական ուղին նշանակում ե զարգացում գյուղացիության խորագույն շերտավորման ճանապարհով՝ մի ընեռում ունենալով խոշոր լատիֆունդիսմեր ու մյուս բնեռում՝ մասսայական աղքատացում: Զարգացման այսպիսի ուղին ան-

խուսափելի յե կապիտալիստական յերկրներում, վորովհետեւ գյուղը, գյուղացիական տնտեսությունը կախման մեջ ե գտնվում քաղաքից, իշխանության բնույթից, իսկ քաղաքում թագավորում ե բուրժուազիան, կապիտալիստական արդյունաբերությունը, կապիտալիստական վարկային սիստեմը, կապիտալիստական պետական իշխանությունը:

Պարտադի՞ր ե արդյոք գյուղացիական տնտեսությունների զարգացման այս ուղին մեր յերկրում, վորտեղ քաղաքն ունի բոլորովին այլ կերպարանք, վորտեղ ինդուստրիան գտնվում ե պրոլետարիատի ձեռքում, վորտեղ տրանսպորտը, վարկային սիստեմը, պետական իշխանությունը: Այլն կենտրոնացված են պրոլետարիատի ձեռքում, վորտեղ հողի աղգայնացումն ընդհանրական որենք ե յերկրում: Իհարկե, պարտադիր չե: Ընդհակառակը: Հենց այն պատճառով, վոր քաղաքը գյուղի դիկտավորն ե, իսկ քաղաքում մեղ մոտ թագավորում ե պրոլետարիատը, վորի ձեռքում են ժողովրդական տնտեսության բոլոր իշխող բարձունքները, հենց այդ պատճառով գյուղացիական տընթացություններն իրենց զարգացման մեջ պետք ե գնան այլ տեղիով, սոցիալիստական շինարարության ուղիով:

Ի՞նչ ուղի յե այդ:

Դա միլիոնավոր գյուղացիական տնտեսությունները կոռպերիացիայի բոլոր գծերով մասսայարար կոռպերացիություններու ուղին ե, յրված գյուղացիական տնտեսությունները սոցիալիստական ինդուստրիայի շուրջը միավորելու ուղին կուկուսիլովմի սկզբունքները գյուղացիության մեջ արե, կուկուսիլովմի սկզբունքները գյուղացիության մեջ արմատավորելու ուղին սկզբում հողագործության միերք ներփակում վաճառահանման ու գյուղացիական տնտեսությունների վաղաքի արտադրանքներ մատակարարելու գծով, իսկ ըին քաղաքի արտադրանքներ մատակարարելու գծով:

Յել այս ուղին քանի գնում, այնքան ավելի անխուսափելի յե ռասոնում պրոլետարիատի դիկտատորայի պայմաններում, վորովհետեւ կոռպերացումը վաճառահանման գծով, կոռպերացումը մատակարարման գծով, վերաջապես՝ գծով, կոռպերացումը վարկի ու արտադրության գծով (գյուղացիությունը վարկի ու արտադրության գծով)

տնտեսական ընկերություններ) — դուդի բարեկեցության բարձրացման միակ ուղին է, զյուղացիության լայն մասսաներին թշվառությունից ու ավելիմունքից փրկելու միայլ միջոցը:

Առում են, թե մեղանում գյուղացիությունն ըստ իր դրության վոչ-սոցիալիստական է, թե դրա պատճառով նա անընդունակ է սոցիալիստական զարգացման: Այդ, իհարկե, ճիշտ, վոր գյուղացիությունը վոչ-սոցիալիստական ըստ իր դրության: Բայց այդ փաստարկ չե գյուղացիան ուղիղ զարգացման, տնտեսությունների՝ սոցիալիզմի ուղիղ զարգանալու դեմ, իմֆե ապացուցված է, վոր գյուղը գնում է քաղաքի հետեխից, իսկ քաղաքում իշխողը սոցիալիստական արդյունաբերությունն է: Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ ել գյուղացիությունը վոչ-սոցիալիստական եր ըստ իր դրության ու բնակչ չեր ցանկանում յերկրում սոցիալիզմ հաստատել: Այն ժամանակ նա ձգտում եր գլխավորապես կարլածատիրական իշխանության լիկվիդացիային ու պատերազմի վերջացմանը, խաղաղության հաստատմանը: Այնուամենայնիվ այն ժամանակ նա գնաց սոցիալիստական պլույտարիատի հետեխ: Ինչո՞ւ: Այն պատճառով, վոր բուրժուազիայի տապալումն ու պլույտարիատի կողմից իշխանություն վերցնելն այն ժամանակ իմպերիալիստական պատերազմից դուրս դալու միակ ուղին եր, խաղաղություն հաստատելու միակ ուղին: Այն պատճառով, վոր այն ժամանակ ուրիշ ճանապարհներ չկային և չեյին կարող լինել: Այն պատճառով, վոր այն ժամանակ մեր կուսակցությանը հաջողվեց շոշափել, գտնել դյուղացիության սպեցիֆիկ շահերը (կարլածատիրոջ տապալում, հաշտություն) յերկրի ընդհանուր շահերին (պլույտարիատի դիկտատուրա) միացնելու ու յենթարկելու այն աստիճանը, վորը գյուղացիության համար ընդունելի գյուղացիությունը, ուղարկելու մեջ ապահովությունը համար ապահովությունը ու ձեռնտու դուրս յեկավ: Յեկ գյուղացիությունը, չնայած նրա վոչ-սոցիալիստական լինելուն, այն ժամանակ գնաց սոցիալիստական պլույտարիատի հետեխ:

Նույն այդ բանը պետք է ասել մեր յերկրի սոցիալիստական շինարարության մասին, գյուղացիությունն այն

շինարարության հունի մեջ ներդրավելու մասին: Գյուղացիությունը վոչ-սոցիալիստական է ըստ իր դրության: Բայց նա պետք է բռնի, ու անպատճառ կրանի, սոցիալիստական զարգացման ուղին, վորովհետեւ չկան և չեն կարող լինել գյուղացիությունը թշվառությունից ու քայլացիության վրա պահպան ուղիներ, բացի պրոլետարիատի հետ զոգվելու ուղուց, բացի սոցիալիստական արդյունաբերության հետ զոգվելու ուղուց, բացի գյուղացիության մասսայական կոռպերացման միջոցով գյուղացիական տընտեսությունը սոցիալիստական զարգացման ընդհանուր հունի մեջ ներառելուց:

Ինչո՞ւ հատկապես գյուղացիության մասսայական կոռպերացման միջոցով:

Այն պատճառով, վոր մասսայական կոռպերացման մեջ օմենք դատանք մասնավոր շահը, մասնավոր-առելության շահը միացնելու, պետության կողմից այդ ստուգելու և վերահսկողության յենթարկելու այն աստիճանը, ու ընդհանուր շահերին յենթարկելու աստիճանը» (Լենին), վորն հանուր շահերին յենթարկելու աստիճանը» (Լենին), վորը ընդունելի ու ձեռնտու յե գյուղացիության համար և վորը պլույտարիատի համար ապահովում է գյուղացիության պլույտարիատի մասսան սոցիալիստական շինարարության դործի հիմնական մասսան սոցիալիստական շինարարության դործի մեջ ներդրավելու հնարավորությունը: Հենց այն պատճառով վագերին յենթարկելու աստիճանը համար ձեռնտու յե իր ապահով, վոր գյուղացիության համար ձեռնտու յե իր տնտեսությանը գյուղացիաների մասնավոր մատակարարելը կոռպերացիայի տնտեսական մեջենաներ մատակարարելը, հենց այդ պատճառով նա պետք միջոցով կազմակերպելը, հենց այդ պատճառով նա պետք է գնա, և նա կդնա մասսայական կոռպերացման ուղիղով:

Իսկ ի՞նչ և նշանակում գյուղացիական տնտեսությունների մասսայական կոռպերացում, սոցիալիստական արդյունաբերության դիմավորության ուղիղության պարագայում:

Այդ նշանակում և մանր-ապարանքային գյուղացիական տնտեսության նահանջ հին կապիտալիստական ուղուց, վորովհետեխ համար մատակարարելը կոռպերացիայի արդի դիմում դեպի զարգացման նոր ուղի, սոցիալիստական շինարարության ուղին:

Ահա թե ինչու պայքարը հանուն գյուղացիական տըն-

ամսության դարձացման նոր ուղու, պայքարը հանուն գյուղացիների համար համար մասսան սոցիալիզմի կառուցման գործի մեջ ներդրամի ելու—մեր կուսակցության հիմնական խնդիրն եւ հանդիսանում:

Աւատի Համբկի XXYI համագումարը ճիշտ վարչեց՝ վորոշելով, վոր

«Սոցիալիզմի կառուցման հիմնական ուղին գյուղում այն ե, վորոշության առաջնային գործում գտնվող սոցիալիստական պետարակության, պետական վարկային հիմնարկների ու այլ իշխանարանների տնտեսական աճող զեկալարության պարագայում գյուղացիության հիմնական մասսան ներդրամինք կոռուպտատիվ կազմակերպության մեջ և այդ կազմակերպության համար առաջնովնենք սոցիալիստական վարչացումը, ողագործելով, հաղթահարելով ու վարելով նրա կազմակերպության տարրերը» (այս համագումարի բանաձեռ Կերպարանության առթիվ):

Նոր ոպողիցիայի խորագույն սխալն այն ե, վոր նա չի հավատում գյուղացիության դարձացման այս նոր ուղուն, չի տեսնում կամ չի հասկանում այս նոր ուղու ամբողջ անխուսափելիությունը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում: Իսկ այդ բանը նա չի հասկանում այն պատճառով, վոր չի հավատում սոցիալիստական շինարարության հաղթությանը մեր յերկրում, չի հավատում մեր պրոլետարիատի ընդունակությանը՝ իր հետեւյ տանելու շյուղացիությունը սոցիալիզմի ուղիով:

Այստեղից՝ նեպի յերկակի բնույթը չհասկանալը, նեպի բացասական կողմերը չափաղանցացնելն ու նեպի իրեւ գերանցապես նահանջ մեկնաբանելը:

Այստեղից՝ մեր տնտեսության կազմակերպության տարրերի գերի չափաղանցացումն ու մեր սոցիալիստական դարձացման լծակների (սոցիալիստական արդյունաբերություն, վարկային սիստեմ, կոռուպտացիա, պրոլետարիատի շինանություն և այլն) դերի նվազեցումը:

Այստեղից՝ մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթում չըմբոնելը և լենինի կոռուպտատիվ պլանի ճշուածումը:

Այստեղից՝ դյուլի չերտավորումն ուղղվելը, խուժապը կուլակի հանդեպ, միջակի դերի նվազեցումը, միջակի հետ

ամուր դաշինք սպահովելու վերաբերյալ կուսակցության քաղաքականությունը վիճեցնելու վորձերը և, ընդհանրապես, պատեալատ ընկնելը՝ գյուղում կուսակցության վելքը քաղաքականության հարցում:

Այստեղից՝ կուսակցության այն հսկայական աշխատանքը չըմբոնելը, վոր կատարվում է բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաներին արդյունաբերության ու գյուղատնտեսության շինարարության, կոռպերացիայի ու խորհուրդների աշխատացման, յերկրի կառավարման մեջ, բյուրոկրատիվ գեմ մղվող պայքարի, մեր պետական արարատի բարեկալման ու փոխակերպման համար մղվող պայքարի ասպարեզ ներդրամի ելու համար, —աշխատանքը, վորը նշանավորում է գարգացման նոր շրջանն ու առանց վորի յերեակալայելու չե վոչ մի սոցիալիստական շինարարություն:

Այստեղից՝ անհուսությունն ու գլխակորուսությունը մեր շինարարության դժվարությունների հանդեպ, կասկածները մեր յերկրի ինդուստրացման հնարավորության նկատմամբ, հուետեսական շաղակատանքը կուսակցության վերաբերման մասին և այլն:

Նրանց մոտ՝ բուրգումաների մոտ—ամեն ինչ ավելի կամ պակաս չափով լավ վիճակում ե, իսկ մեղ մոտ՝ կամ պակաս չափով վատ վիճակում. յեթե Արևմուտքից հեղափոխությունը վրա չհանի, մեր բանը բուրդ ե, —այս ե նոր սպողիցիայի ընդհանուր տոնը, վորն ըստիս, լիկիդակառական տան ե, բայց նույն բանի համար (յերեկի զվարճացնելու համար) սպողինչոր բանի համար յերեկի զվարճացնելու համար»:

Նեպը կապիտալիզմ ե, ասում ե ոպողիցիան: Նեպը նահանջ ե գերազանցապես, ասում ե ընկերությունը: Ինակե, այս ամենը ճիշտ չե: Իրոք նեպը կուսակցության հարկե, այս ամենը ճիշտ չե: Վորը թալիս սոցիալիստական քաղաքականությունն ե, վորը թալիս սոցիալիստական տարրերի պայքարի համար կառավարական տարրերի ամառանալիությունը: Իրոք նեպը ամենը ճշուածումը և ամենը ամենը ճանապարհությունը:

Հանջի ընթացքում ուժերի վերասմբալորում կատարել ու հարձակում սկսել: իրոք արդեն միքանի տարի յէ, ինչ մենք հարձակվում ենք, ու հարձակվում ենք հաջողությամբ, գարդացնելով մեր խնդուստրիան, գարդացնելով խորհրդային առևտուրը, նեղելով մասնալոր կապիտալին:

Բայց վո՞րն ե այս թեղիսի իմաստը—նեղը՝ կապիտալիդմ ե, նեղը՝ գերազանցապես նահանջ ե: Ինչի՞ց ե յենում այս թեղիսը:

Նա յենում ե սխալ յենթադրությունից այն մասին, թե մեղանում հիմա կատարվում է կապիտալիդմի սոսկական վերականոնում, կապիտալիդմի սոսկական «վերադարձ»: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ուղղվածիայի կարևածները մեր արդյունաբերության սոցիալիստական բնույթի վերաբերմամբ: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ուղղվածիայի խուճապը կուլակի հանգեալ: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել այն փութկոսությունը, վորով ոպողիցիան կառչեց դյուղացիության շերտավորման վերաբերյալ սխալ թվերին: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ուղղվածիայի հատուկ մոռացկոտությունն այն մասին, վոր միջակը մեղ մոտ հողադործության կենտրոնական դեմքն ե: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել միջակի տեսակաբար կշռի թերապնահատումը և կասկածները լենինի կոռպերատիվ սլանի նկատմամբ: Միայն այս յենթադրությամբ կարելի յե «Հիմնալորել» նոր ուղղվածիայի չհավատալը գյուղի գարգացման նոր ուղուն, գյուղը սոցիալիստական շինարարության մեջ ներդրավելու ուղուն:

Իրոք այժմ մեղ մոտ տեղի յե ունենում վո՞չ թե կապիտալիդմի վերականգնման միակողմանի պրոցես, այլ կապիտալիդմի գարգացման ու սոցիալիդմի գարգացման յերկողմանի պրոցես, սոցիալիստական տարրերի կողմից կապիտալիստական տարրերի դեմ ուղղված պայքարի հակասական պրոցես, սոցիալիստական տարրերի կողմից կապիտալիստական անվիճելի յե ինչպես քաղաքի նկատմամբ,

վորտեղ սոցիալիզմի բաղան պետական արդյունաբերությունն ե, այնպէս ել գյուղի նկատմամբ, վորտեղ սոցիալիստական զարգացման հիմնական կեռիքը մասսայական կոռպերացիան ե, վորը զողվում ե սոցիալիստական արդյունաբերության հետ:

Կապիտալիզմի սոսկական վերականգնումն անհնարին ե թեկուղ այն պատճառով, վոր մեղ մոտ իշխանությունը պրոլետարական ե, իսուր արդյունաբերությունը պրոլետարիատի ձեռքումն ե, տրամսալորտն ու վարկը գտնվում են պրոլետարական պետության տրամադրության տակ:

Շերտավորումը չի կարող նախկին չափերն ընդունել, միջակը մնում է գյուղացիության հիմնական մասսան, իսկ կուլակը չի կարող առաջիկ ուժն ստանալ թեկուղ այն պատճառով, վոր հողը մեղ մոտ ազգայնացմած ե, ընջանառությունից հանված ե այն, իսկ մեր առևտրական, վարկային, հարկային ու կոռպերատիվ քաղաքականությունն առաջական կուլապղած ե գեղի այն, վորակեսղի սահմանափակենք կուլապղած յահագործողական ձգումները, բարձրացնենք գյուղացիության ամենալայն մասսաների բարեկեցությունը և հարթենք ծայրահեղությունները գյուղում: Ել յես չեմ խոսում այն մասին, վոր պայքարը կուլակության գեմ մեղ մոտ հիմա ընթանում է վո՞չ միայն հին գծով՝ չքաղաքորության կուլակության դեմ կազմակերպելու գծով, այլև նոր գծով, պրոլետարիատի ու չքաղաքորության գաշինքը միջակ գյուղացիական մասսաների հետ: կուլակության դեմ ամբաղջուրու գծով: Այն փաստը, վոր ուղղվածիան չի համանական մասսական դաշտական գույքի գույքը կուլակության դեմ այս յերկորդ գծով պայքարելու խմաստն ու նշանակությունը, այս փաստը մի ակելորդ անգամ հաստատում ե, վոր ուղղվածիան խոսուրկում դեպի գյուղի զարգացման հին ուղին, նրա կապիտալիստական զարգացման ուղին, յերբ կուլակն ու չքաղաքորությունը կազմում ելին գյուղի հիմնական ուժերը, իսկ միջակը «վողովզում-սրբում եր»:

Կոռպերացիան պետական կապիտալիզմի այլատեսակությունն ե, ասում ե ուղղվածիան, ընդումին վկայակոչելու վողում և անվիճելի «Պարենհարկը». այդ պատճառով նա չի համար լենինի «Պարենհարկը».

Վասուսմ կոռպերացիան վորակես սոցիալիստական դարձացման հիմնական կեռիք ոգտագործելու հնարավորությանը: Ապօպիցիան այսուղ ել կոպտագույն սխալ ե զործում: Կոռպերացիայի այդպիսի մեկնաբանումը բավական եռ ուրավար եր 1921 թվին, յերբ գրվել է «Պարենհարկը», յերբ մենք չունենք զարդացած սոցիալիստական արդյունաբերություն, յերբ լենինը պետկապիտավորմը պատկացնում եր վորակես մեր տնտեսավարման հարավոր հիմնական ձև, իսկ կոռպերացիան դիտում եր պետկապիտավորմի հետ զուգակցված: Բայց այդ մեկնաբանությունն այժմ արդեն պակասավոր ե, և պատմությունը դերադանցել ե նրանից, վորովճետե այդ պահից իւլիս ժամանակները փոխվել են, սոցիալիստական արդյունաբերությունը մեղ մոտ զարդացել ե, պետկապիտավորմը չի պատվառվել այն աստիճան, ինչ աստիճան այդ ցանկալի յեր, իսկ կոռպերացիան, վոր հիմա մի տասնյակ միլիոն անդամից ավելի յե ընդդրում, սկսել ե զոդվել սոցիալիստական ինդուստրիայի հետ:

Այլապես ել ինչո՞վ բացատրենք այն փաստը, վոր «Պարենհարկը» արդեն յերկու տարի անց, 1923 թվին, լենինն սկսեց ուրիշ կերպ դիտել կոռպերացիան՝ դանելով, վոր «կոռպերացիան մեր պայմաններում ամենուրեք միանդամայն համընկնում ե սոցիալիզմի հետ» (տե՛ս հաստոր ՀՀՎII, էջ 396):

Այլապես ել ինչո՞վ բացատրենք այդ, յեթե վոչ նրանով, վոր այդ յերկու տարվա ընթացքում սոցիալիստական արդյունաբերությունն արդեն կարողացալ ամել, իսկ պետկապիտավորմը հարկավոր չափով չպատվաստվեց, այս պատճառով լենինն սկսեց դիտել կոռպերացիան արդեն վո՞չ թե պետկապիտավորմի հետ զուգակցված, այլ սոցիալիստական արդյունաբերության հետ զուգակցված:

Փոխանցին կոռպերացիայի զարդացման պայմանները: Գետք ե փոխվեր նաև մոտեցումը դեպի կոռպերացիայի գարց:

Ահա, որինակ, մի յերեւել տեղ լենինի՝ «կոռպերա-

ցիայի մասին» (1923 թ.) բբոշուրից, վորը լույս է սըմբում այս հարց:

«Պետական կապիտալիզմի պայմաններում 1 կոռպերատուիլ ձևնարկությունները տարբերվում են պետական-կապիտալիստական ձևնարկություններ և, յերեկություններից նախ վորակես մասնակիլություններ: Պայուրյուն ունեցող մեր բորդ՝ վորակես կուկավիլ ձևնարկությունները տարբերվում են մասնավոր-կապիտալիստական ձևնարկություններից վորակես կուկավիլ ձևնարկություններ, բայց չեն տարբերվում 1 սոցիալիստական ձևնարկություններից, յեթե նրանք հիմնված են այն հողի վրա, այնպիսի արտաքամբների առկայությամբ, վորոնք պատկանում են պետությանը, այսինքն՝ բանվոր դասակարգին» (տե՛ս հ. ՀՀՎII, էջ 396):

Այս վորքիկ ցիտատում լուծված ե յերկու մեծ հարց: Նախ այն հարցը, վոր «գոյություն ունեցող մեր կարգերը» պետկապիտավորմ չեն: Յերկորորդ՝ այն հարցը, վոր կոռպերատիվ ձևնարկությունները, վերցրած «մեր կարգերի պերատիվ ձևնարկությունները, պարզունակություն» սոցիալիստական հետ» զուգակցված, «չեն տարբերվում»:

Յետ կարծում եմ, վոր դժվար ե ավելի պարզ արտադայումիլ:

Ահա ելի մի տեղ լենինի նույն այդ բբոշուրից.

«Կոռպերացիայի սովորական աճումը մեզ համար նույնական է (վերը նշված «փոքրիկ» բացատրվյամբ) սոցիալիզմի աճման հետ, և դրա հետ ներկայ մենք ստիպված ենք ընդունել սոցիալիզմի նկատմամբ մեր ուժեկանությունը ամբողջ տեսակետի արմատականացնելը» (տե՛ս նույն ներկայ ամբողջ տեսակետի արմատական փոփոխությունը) (տե՛ս նույն ամեղը):

Ակներեւ ե, վոր «կոռպերացիայի մասին» բբոշուրում մենք գործ ունենք կոռպերացիայի նոր գնահատության հետ, վորը նոր ուղղուցիչին չի ցանկանում ընդունել և վորի հետ, վորը նոր ուղղուցիչին չի ցանկանում, պահանջությունը կակառակ մասին նա ինամքով լրություն ե պահպանում, հակառակ վաստերին, հակառակ ակներեւ ճշմարտությանը, հակառակ լենինիմի:

Մի բան ե—կոռպերացիան՝ վերցրած պետկապիտավորմի հետ զուգակցված և այլ բան—կոռպերացիան՝ վերցրած սոցիալիստական արդյունաբերության հետ զուգակցված:

1 Ընդգծումն իմն ե: Ի. Ար:

Սակայն սրանից չի կարելի անել այն յեղակացությունը, թե «Պարենհարկի» ու «Կոռպերացիայի մասին» բրոշյուրի միջև անդունք կա: Այդ, իհարկե, սխալ ե: Բավական է վկայակոչել, որինակ, հետեւյալ տեղը «Պարենհարկից», վորակեազի մեկ անդամից ըմբռնենք անխղելի կապը «Պարենհարկի» ու «Կոռպերացիայի մասին» բրոշյուրի միջև՝ կոռպերացիայի գնահատության հարցում: Ահա այդ տեղը.

«Կոնցեսիաներից սոցիալիզմին անցնելն անցումն և խոշոր արտադրության մի ճեկա խոշոր արտադրության մի ուրիշ ճեկ: Մանր տնտեսատիրուկների կոռպերացիայից սոցիալիզմին անցնելը անցումն և մանր արտադրությունից խոչըրին, այսինքն մի ավելի բարդ անցումն, բայց զբար փոխարեն այն ընդունակ է ընդդրկելու, հաջողության դեպքում, բնակչության ավելի լայն ժամանելը, ընդունակ է դուրս քաշելու ավելի խորունկ ու ավելի կենսունակ արժաներ հին, մինչսոցիալիստական 1, նույնիսկ մինչկապիտալիստական հարաբերությունների, վորոնք ամենահամառն են ամեն մի «նորույթի դիմադրելու իմաստով» (Հ. XXVI, էջ 337):

Այս ցիտատից յերեսում ե, վոր Լենինը դեռևս «Պարենհարկի» ժամանակ, յերբ մեղանում դեռ զարդացած սոցիալիստական ինդուստրիա չկար, հնարավոր եր համարում, վոր կոռպերացիան, հաջողության դեպքում, կարող է փոխարկվել պայքարի մի հզոր միջոցի ընդդեմ «մինչսոցիալիստական», ուրիմն և ընդդեմ կապիտալիստական հարաբերությունների: Յես կարծում եմ, վոր հետադրում հենց այս միտքն ել մեկնակետ է ծառայել նրա «կոռպերացիայի մասին» բրոշյուրի համար:

Բայց այս ամենից ի՞նչ է հետեւում:

Իսկ սրանից հետեւում ե, վոր նոր ոպողիցիան կոռպերացիայի հարցին մոտենում է վո՞չ թե մարքսիստորեն, այլ մետաֆիզիկորեն: Ոպողիցիան դիտում է կոռպերացիան վո՞չ թե վորակես պատմական յերեսույթ, վոր վերցվում է ուրիշ յերեսույթների հետ զուգակցված, ասենք՝ պետկապիտալիզմի (1921 թվական) կամ սոցիալիստական արդյունաբերության հետ (1923 թվական) զուգակցված, այլ վորակես ինչ-վոր մը-

1 Ընդդումն իմն ե: Ի. Ստ.:

տական ու մեկընդմիւտ տրված բան, վորպես «ինքնին իր»: Այստեղից են ոպողիցիայի սխալները կոռպերացիայի հարցում, այստեղից՝ նրա չհայլատալն այն բանին, թե դյուզը դեպի սոցիալիզմ ե դարձանում կոռպերացիայի միջոցով, այստեղից՝ ոպողիցիայի շեղվելը դեպի հին ուղին, դյուզի կապիտալիստական զարդացման ուղին:

Ընդհանուր ամբամբ այսպես և նոր ոպողիցիայի դիրքը սոցիալիստական շինարարության պրակտիկ հարցերում:

Յեղակացությունը մեկ ե—ոպողիցիայի գիծը, ինչ չափով վոր նա դիմ ունի, ոպողիցիայի տատանումներն ու յերերումները, նրա չհայլատալն ու դիմակորույս լինելը գժվարությունների հանդեպ—տանում են դեպի կապիտուլացիա մեր տնտեսության կապիտալիստական տարրերի հանդեպ: Վորովյեսեմ, յեթե նեպը դերազանցավես նահանջ ե, յեթե պետական արդյունաբերության սոցիալիստական բնությունը կասկածի յե յենթարկվում, յեթե կուլակը համարյա թե ամենակարող ե, կոռպերացիայի վրա քիչ հույս կա, միջակի դերը պրոդեմակիլ կերպով ընկնում ե, դյուզի զարդացման նոր ուղին տարակուսելի յե, կուսակցությունը համարյա թե վերասերվում ե, իսկ Արևմուտքեց դալքը հեղափոխությունը դեռ այնքան ել մոտ չե,— ասկա այս ամենից հետո ելի՞նչ ե մնում ոպողիցիայի դինանցում, նա ինչի՞ վրա յե դնում հույսը մեր տնտեսության կապիտալիստական տարրերի դեմ մղող պայքարում: Հո չի՞ կարելի կոխի գնալ միմիայն «Պարաշրջանի վիլիսովայությամբ»:

Պարզ ե, վոր նոր ոպողիցիայի զինանոցն անհախանձելի յե, յեթե առհասարակ կարելի յե զինանոց անվանել այն: Այդ զինանոցը կոմի համար չե: Առավել ևս նա հաղթության համար չե:

Պարզ ե, վոր այլուրիսի զինանոց ունենալով՝ կուսակցությունը «մի ակնթարթում» կկործաներ իրեն, յեթե կոմի մեջ մտներ,—հարկ կլիներ պարզապես անձնատուր լինել մեր տնտեսության կապիտալիստական տարրերին:

Այդ պատճառով կուսակցության XIV համագումարը միանդամայն ճիշտ վարվեց, վորոշելով, վոր «պայքարը

Հանուն սոցիալիստական շինարարության հաղթանակի ԽՍՀՄ մեջ՝ կուսակցության հիմնական խնդիրն եւ հանդիսանում»։ Վոր այդ խնդրի լուծման անհրաժեշտ պայմաններից մեկը «մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու դորձին չհավատալու և այն փորձերի դեմ պայքարելն եւ, ըստ վորոնց «հետեւղական սոցիալիստական տիպի»» (Լենին) ձեռնարկություններ հանդիսացող մեր ձեռնարկությունները դիտվում են վորպես «պետական-կապիտալիստական» ձեռնարկություններ։ Վոր «այդպիսի գաղափարային հոսանքները, անհնարին դարձնելով մասսաների դիտակցական վերաբերմունքը դեպի սոցիալիզմի կառուցումն ընդհանրապես և սոցիալիստական արդյունաբերության կառուցումը մասնավորապես, ընդունակ են միայն արդեւսկելու տնտեսության սոցիալիստական տարրերի աճումը և հեշտացնելու մասնավոր կապիտալի կողմից մղվող պայքարը նրանց դեմ»։ Վոր «այդ պատճառով համագումարն անհրաժեշտ եւ համարում լայն դաստիարակչական աշխատանքը՝ լենինիզմի այդ խեղաթյուրումները հաղթահարելու համար» (տե՛ս Համկե Կի-ի հաշվետվության առթիվ ընդունված բանաձեռ)։

Համկե ԽՄ համագումարի պատմական նշանակությունն այն է, վոր նա կարողացավ մինչև արմատները հայտաբերել նոր ուղղիցիայի սխալները, դեն նետեց նրա չհավատալն ու նվազուցը, պարզ ու հատակ կերպով ուրվագծեց սոցիալիզմի համար մղվող հետադա պայքարի ուղին, հաղթանակի հեռանկար տվեց կուսակցությանը և հենց դրանով ել պրոլետարիատին դինեց անխորսակելի հավատով դեպի սոցիալիստական շինարարության հաղթությունը։

25 Խուճարի 1926 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդունություն	5
Գլխավորը լենինիզմի մեջ	8
«Պերմանենտ» հեղափոխության հարցը	10
Պրոլետարական հեղափոխությունը և պրոլետարիատի դիկտատուրան կուսակցությունը	13
առւրայի սիստեմում	23
Սոցիալիզմի հաղթության հարցը մի յերկրում	53
Պայքար սոցիալիստական շինարարության հաղթության համար	67

Խմբագիր Բ. Մարտիրոսյան
Տեղան, խմբ. Ս. Խաչատրյան

Սըբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սըբագրիչ Կ. Արովյան

Քլավլիոնի լիտուր 6591, հըստ. № 550,
Պատվիր 46, տիրաժ 15,000

Հանձնված և պատառընթյան 19/III 1938 թ.
Ստորագրված և տպագրելու 16/IV 1938 թ.

Թղթի չափուը 62×94 (33.440 տպ. նիշ. 1 տպ. մամուլում) 5¹/₄ տպ. մամուլ
2³/₄ թերթ թուղթ.

Դինը չքեզը 70 կ., կազմը 1 ու 30 կ., հասարակը 55 կ., կազմը 95 կ.

Գետնատ — քաղաքական գրականության բաժնի Հրատարակչության
տպարան, Յերևան, Արավելոց ան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0178630

